

ՄԱՐԻԲԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

(Տես Հ. ԽԱ. Էջ 54, 111, 224, 308, ԽԲ. 35, 123):

ԳԼՈՒԽ Ժ

Արմենիոյ ծագումն. — Արամ. — Առան կամ Իրան. — Արմենակ. — Լընորմանի կարծիքն Հայոց և Այսրոսեանց ծագման և զարգացման մասին. — Անհատատոռքին և մեր ժամանակն կարծեաց. — Նոր ենթադրութիւն մի փոխզուցեցոց մասին, և անոր բանաւոր լուծումն. — Եզրակացութիւն:

Հիմայ դառնանք հայեացք մը տանք Արմէն կամ Արմէնի վերագրին գործածութեան, և անոր ծագման խորհրդական քողը պարզելու: Խորենացին (Ա. Գլ. ԺԲ) յԱրամայ յառաջ եկած կը համարի. ինչպէս Հարդման՝ Ասորոց Արամ՝ նահապետին անուանէն, որուն ոչ միայն ազգային աւանդութիւնք, այլ նոյն իսկ Արմենիոյ աշխարհագրական դիրքն կը հակառակին: Իսկ Լընորման՝ արդի ուրիշ բանասիրաց հետ՝ յԱրմենակայ ծագած կը համարի, որ գէթ ըստ ձայնին աւելի մերձաւոր կ'երևի այս յատուկ աւանան:

Մենք այս վերջին կարծեացս համախոհ ենք, որուն աւելի հաստատութիւն կու տան նոյն իսկ Սերէոս և Ներսէս Շնորհալի. որոց առաջինն մինչև ազգիս նախահօր Խիտղոսն անգամ՝ (իւր համաձայն Աբիւղենոսի) Արմենակայ կու տայ. իսկ վերջինն՝ Արմենիոյ անուան ծագումը միայն: Սակայն ասով չենք ուզեր և պէտք չէ Խորենացւոյ և անոր հեռեւորաց կարծիքն 'ի հիմանց ելծանել. վասն զի անոնք ևս իրենց քովէն չինած չեն, այլ կամ այն է թէ Մար Աբասայ պատմական վերկայութեան և կամ ազգային ընդհա-

նուր և հնաւանդ աւանդութեանց վերայ հիմնեալ կը հաստատեն զայն: Եւ Մար Աբաս ազգաւ Ասորի ըլլալով՝ կըրնար արդարեւ այս դիտումն ունենալ թէ Արմենիոյ վերագրին յԱրամայ յառաջ բերելով՝ դիւրաւ կը յաջողէր, ինչպէս Հայոց նահապետն զԱրամ՝ Ասորոց նահապետին Արամայ, այսպէս ալ զՀայս՝ Ասորոց մերձեցընել:

Առանց նորանոր ենթադրութեանց դիմելու, և մարիքասեան կամ տոհմային պատմութեան համաձայն ընթանալով, կրնանք ըսել թէ ժամանակ մը մեր աշխարհն յանուն այս երկու նահապետաց, այսինքն՝ Արմենակայ և Արամայ՝ կոչուած ըլլայ այնպէս:

Արմենակ՝ յետ մեռանելոյ Հայկայ, կ'ըսէ Խորենացի, (Ա. ԺԱ. ԳԼ.) «Գընաց յարեւել հիւսիսոյ, և էլ 'ի դաշտ մի պատեալ բարձրագագած լեռամբ... և զինեաց տեղի բնակութեան... և զինառն զայն յուր անուն Արագած կու չեաց», կամ ըստ Չամչեանին՝ Արամեն ազած:

Սակայն եթէ ուշ զնելու ըլլանք ուրիշ աւանդութեանց ևս՝ վարդանայ և Յովհանն Կաթողիկոսի, Մեծ Հայք անգամ՝ որ առաջինն երկիր և բնակութիւն եղաւ Հայոց, կոչեցաւ մասնաւոր անուամբ Արմենակ կամ Արամենակ՝ ըստ վարդանայ: Իսկ Արամ՝ յետոյ յաջորդելով Արմենակայ, իւր դիւցազնական արութեամբ՝ ոչ միայն ազատեց զմեծ Հայս 'ի լծոյ օտար ազգաց, այլ բաց 'ի Պոնտոս և Կապադովկիոյ երկրներէն, որոց համար կ'ըսէ Խորենացի (Ա. ԳԼ. ԺԲ.) «Վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանին յանուն նորա Պոնտոսի Արմէնիսն», այսինքն

է Առաջին Հայք, (վասն զի, ըստ Չամչեանի՝ այս աշխարհն՝ զոր Արամ առաւ արտաքոյ է Մեծին Հայոց), տիրեց նաև Ասորոց և այլոց դարցի ազգաց զանազան կողմերուն։ Ուստի շատ հաւանական է՝ որ անկէ վերջը թէ հայազգի և թէ օտարասեռ ժողովուրդք, որոնք կրեցին անոր զինուց և զօրութեան ազդեցութիւնը, և որոնցմով բազմամարդ ըրաւ նա այն այնահայկալած երկիրներն, Արամեանք կոչուէին և երկիրն Արամէն կամ Արմէն։ Եւ հաւանական է թէ բոլոր արեւելեան Արմենիոյ կամ հնոյն Հայաստանի այն մասն՝ որուն կը տիրեն այժմ Պարսիկք և Ռուսք, որ հիւսիսէն կը հասնի մինչև ցՏփիսիս և արևելքէն ցկասպից ծով և ցՏէրակնտ, որուն այժմ Առան կ'ըսենք Հայքս, Արամ՝ 1 կամ Արամէն կոչուած պիտի ըլլայ 'ի հնումն՝ յանուն Արամայ։

Արգ՝ Առան (Arran) բառն որչափ որ վերջի ժամանակաց և Արաբացոց մէջ գործածուած կը կարծուի, իրօք նոյնչափ ևս հին է, և Զանգիկ գրոց մէջ Արիսանա գրուած կը գտնեն բանասէք, և կը ցուցնեն Արմէնիոյ այն մասը՝ որ Երասխայ հիւսիսային կողմը կ'իյնայ, ինչպէս ըսինք։ Եւ նոյն իսկ անոր գիրքէն դիւրաւ կ'իմացուի, որովհետև Էրիեմիսիոյ կամ Արիեմեիոյ երկրին տարածութեան մէջ կը բովանդակուէր, իսկ որովհետև Էրիեմեիս, զոր յետոյ պիտի տեսնենք, ըստ Սէն Մարգրեմի բացարձակապէս

Արմէնիա կամ Հայաստան կը նշանակէ Զանգիկ գրոց մէջ, ուրեմն անկէ ալ կրնանք եզրակացնել՝ թէ այս արդի Առան կամ Իրան կոչուած երկիրն՝ նախնական ժամանակներէ՝ ի վեր (յԱրամայ արդեօք) Հայոց կը վերաբերէր, և իւր մէջը կը պարունակէր հնոյն Հայաստանի՝ Սիւնեաց, Արցախու, Փայտակարանի, Գուգարաց, Ուտեաց, Վասպուրականի և մասամբ ևս Արարատեան գաւառները։ Սյս արդարև յայտնի է, եթէ Զանգիկ գրոց ոչ զնեւ ըլլանք, որ այժմուս Առանն (թերեւս Արամ) 'ի հնումն աւելի ևս կը տարածուէր դէպ 'ի հարաւ, իւր մէջը բովանդակելով Արմեայ քաղաքը և Ատրպատականի ալ մեծագոյն մասը։

Սակայն այս հարցման՝ թէ ի՞նչ պատճառաւ և Հայաստանի որ մասն Զանգիկ գրոց մէջ Էրիեմիսիոյ կամ Արիեմէնիա գրուած է, և որն Արիսանա կամ Առան, պատմաբանօրէն այսպէս կը պատասխանենք, թէ ուրիշ պատճառ չենք գտներ բայց միայն՝ որ այս երկու հայ նահապետաց (Արմենակայ և Արամայ) անուամբք ևս յաշորդաբար և փոխադարձօրէն կոչուած է յօտարաց հինն և մեծատարածն Արմենիա։ Եւ թէ Արարատեան նահանգն է անտարակոյս Արիեմէնիա կոչուածն, որուն ինչպէս ըսինք, նախնաբար տիրեց Արմենակ։ Իսկ Առան կամ Արիսան անունն անոր չընկալայ նահանգներուն կը տրուէր, որոց 2 յետոյ տիրեց Արամ, և այս է անշուշտ Զանգիկ

1 Հերէն իւր Գաղտք. և վճի. ազգ. գրոց. Բ. հ. 190 երեսին մէջ կը զուգէ թէ Արամ, որ արեւելեան վաղեմի բառ է, 'ի հնումն կը տրուէր բոլոր այն երկիրներուն՝ յորս կը բնակէին Հայք և Ասորիք (Հայաստանի և Ասորեստանի)։ Եւ բազմահման Պրահուֆ կը հաստատէ թէ Arya (Ari) կը նշանակէ ազնուական, (noble, de race noble). — Nom propre des populations blanches, qui envahissaient l'Inde au temps de Veda. Arie, Asie, Arménie. — Dictionnaire sanscrit — Franc. 1863.

2 Սյս ենթագրութիւնն թող նոր չերևի մեր ընթերցողաց։ Արգէ բանասէրն՝ Գ. Լեոնորման իւր Հին. ազգ. պատ. Ա. հ. 1 էջ 394 մէջ գ'ւտէ թէ Հայք կամ Կ. դարուն Արմենիոյն բոլորովն Սյսանական ժողովուրդքէն իրենց լեզուովն

և բնական գծագրութեամբ։ Սակայն Իրանական և Արիական ընդարձակածաւալ ցեղերու իրարու հետ ունեցած ազգակցութիւնն և նախկին խանձարուրդն՝ տակաւին նախապատմական ժամանակի քողով ծածկուած կը մնայ, և արդի բանասիրաց և հնախուլից մէջ գժուտ բաւուածելի խնդիր մ'է։

Սասնէ, Պոսնսն, Լեոնորման և Եփիէէլ զԱրիսան վաւկա կամ Վէնա (Aryana — Vae-ga կը համարին. որ ըստ Ռոգեայ կասպից ծովուն ալ և ձախ ափանցը վրայ լինելու է. այսինքն կամ Հայաստանի և Վրաստանի բարձրաւանդիկ վրայ 'իյնայ և կամ Արգրոնական Ասիոյ Altaï բարձրութեան վրայ։ Սոնիէ Վիլլիամս Indu Kuschի հիւսիսային բարձրաւանդին (Բամիլէ) վրայ կը համարի. ուր Քրիստոսէ

գրոյ մէջ Հայաստանի տարբեր կերպով (Արմենիա կամ Արամէնիա) հընչուելուն և գրուելուն անմիջական պատճառն՝ յօտարաց:

Իսկ եթէ ուզենք բանասիրական ուճով և լեզուաբանօրէն մտածել՝ այն ժամանակ բոլորովին տարբեր նշանակութիւն կ'առնու մեր աշխարհի Արմենիա վերագիրն, Ըստ Պօյարի՝ անոր արմատականն է հայր՝ որ նոյն պիտի ըլլայ ընդ ուր բառին, և լեռ կը նշանակէ, և Մեննի՝ որ խորենացոյ Մանաւազն է. և կը կարգացուի 'ի միասին Միւնույ-շեառն: Վալ Ասիա ըսուած երկասիրութեան մէջ այսպէս կը ջանայ ստուգաբանել զԱրմենիա. անոր արմատականը հայր՝ նոյնպէս թողլով, վերջնական մասնը կրնէ համար կ'ըսէ թէ զանդկերէն Միւնու և Պարսկերէն Միւն բառէն կը բաղկանայ, որ երկինք կամ երկնային կը նշանակէ, որով ամբողջական նշանակութիւնն կը լինի երկնային լեռան:

Սակայն համարելով թէ արեւելեան ազգաց մէջ այսպիսի բացատրութիւն մը սովորական էր, ինչպէս Հրէից գըրոց մէջ ստեպ կը հանդիպինք՝ լեռան Աստուհոյ, լեռան Տեառն, Սիւն լեռան, յաւիտեանական լեռան, և այլն, և որով ոչ միայն պարզապէս լեռ կը հասկընային, այլ շատ անգամ անով՝ երկիր մը կամ ազգի մը ամբողջ ժառանգութիւնն, սակայն այսու հանգերէ առանց հիման կը մնայ այնպիսի ստուգաբանութիւն մը, ևս և հակասական Արմենիոյ: Դեռնք թէ Հար-Մեննի՝ ոչ միայն Միւնույ լեռան, այլ և երկիր կարենայ նշանակել. սակայն ով չի գիտեր թէ այդ Միւնույ կամ Մանաւազեան երկիրն՝ պզտիկ նախարա-

րութիւն մ'էր Հայոց սահմանակից 'ի հնումն, մինչդեռ ընդհակառակն եթէ հինք և եթէ նորք Արմենիա բաւով՝ կ'իմանան բոլոր հին Հայաստանի ընդարձակածաւալ տէրութիւնն:

Ուստի ուրիշներն ինչպէս որ կ'ուզեն՝ թող գնահատեն այս լեզուագիտական և բառական մեկնութիւնը. մենք պատմական աւանդութիւնք (մանաւանդ երբ ընդհանուր են և ամենահաւանական) վերագտնելով քան զայն, կը փութանք Արմենիա բառին կիրառութեան հնութիւնը գիտելու:

Իբրեւ անժխտելի հաւատարմ բաց 'ի Հերոդոտոսէն և Բաննուփոնէն, գրեթէ առաջին անգամ Դարեհի վշտասպեայ արձանագրութեանց մէջ կը զմոռի Արմէն կամ Արմենիա անունն, որ հինգ և կէս դար առաջ է գրեթէ՝ մեր թուականէն: Գրեթէ կ'ըսեմ՝ վասն զի տրամաբանօրէն չի կրնար մէկն հաստատել թէ այն ժամանակէն 'ի վեր սկսաւ այդ անուն կիրառութիւնն, և ոչ բընաւ յառաջ: Իրաւընէ, եթէ չենք ուզեր զԱրմենիա և զՀայս՝ Արեաց և Մարաց հետ մէկ ազգ և մէկ տէրութիւն համարիլ, որ յայտնապէս հակառակ է պատմութեան և անժխտելի կերպով հաստատուած է 'ի Հրէից գրոց, ըսելու ենք թէ կարելի բան չէ՝ որ մեր աշխարհի այդ վերագիրն արիական և դրացի ազգաց կանխաւ ծանօթ եղած չլլար. որովհետեւ ըսինք թէ յարտաքնոյ գործածուած է այն, ինչպէս առ Հերոդոտոսի, որ ժամանակակից է զըրեթէ Դարեհի վշտասպեայ:

Անշուշտ է, և համոզուած ենք թէ առ կիւրոսիւ՝ Հայաստանի ինքնավարութեան ժամանակ, և թէ առ Մարգը՝ արդէն Արմէն կամ Արմենիա ա-

2000 տարի առաջ կը բնակէին արիական ազգք՝ Արիա (Aryas) անուանակոչութեամբ, որք ամէնքն այլ փոքր ինչ տարբերութեամբ մի և նոյն կրօնքը, լեզուն, օրէնք և սովորութիւններն ունէին, և յետոյ զաղթականութեամբ տարածուեցան 'ի Հնդկիս և 'ի Փօքը Արիա և այլոք:

Իսկ այժմու հաւանականացն կարծիքն է Ա. Փեկզէնը, որ 'ի Բաղարիս կը գնէ արիական ցեղից խանձարուբը, սանսրիս գրոյ

վրայ հաստատուած, որոց բնապատմական և աշխարհագրական հանգամանքներն՝ մեծ ըլլաւ կուտան: Այս կարծեաց կը հետեւին Յովհան Մուրի հնդկերէնագէտն և Վիվէն Տը Սէն Մարգէն քաջ աշխարհագիրն: Սակայն այսու մեր ենթադրութիւնն աւելի կը հաստատուի՝ եթէ Արմայն աշխարհակալութիւնքը յուշ ածենք:

նունն գործածական էր, և ոչ թէ Դարեհ Նոր ինչ հնարեց. որովհետեւ նախ Հայաստան կամ Արմենիա առանձին ինքնավարութիւն ունեցած ատեն՝ պէտք էր որ բնականապէս ունենար նաև իւր առանձին վերադիրն. եւ իւրօր, եթէ հարցընենք Հրէից գրքերն և հին յիշատարանք, գրեթէ անբացատելի կերպով կը հաստատեն զայն. Ամովայ մարգարէութեան մէջ (Դ. Գ. 3), որ Ոգիայի ժամանակակից էր, (810—759) այսու անուամբ կը յիշատակէ զաշխարհս մեր՝ ըսելով. «Եւ եւրանիցէք մերկք՝ միմեանց դէմ՝ ընդդէմ, և անկանիցիք ՚ի լըրինն Ռեմանայ (Արմենայ), ասէ ՏՏԻ Ե. Սակայն եթէ արդի հին պատմութեան պարապով՝ հռչականուն ք. Շմիթին ուշ դնելու ըլլանք, նա իւր երկասիրութեան ի Գ. զլիւոյն, 566 երեսին մէջ յետ ըսելով՝ թէ Արմենիա վերադիրն՝ այն ամենա հին ժամանակէն սկսեալ՝ յորում նախ քան զԱսորեստանցիս՝ եգիպտոսի թիւ հարստութեան փարաւոններն կը կըռուէին Ռեմենաց կամ Արմենիաց հետ, ապա մի և նոյն զլիւոյն մէջ Թուլթմէս Գ. թագաւորի ժամանակակից եգիպտական յիշատակարան մը մէջ կը բերէ, որ կ'ըսէ՝ թէ այս թագաւորն յետ նուաճելոյ զՄիջագետս՝ անցաւ ՚ի լեւրինս Ռեմենաց կամ Արմենիներու:

Արդարեւ Հայաստանի Արմենիա վերադիրն և ք. Շմիթի բերած եգիպտական այս յիշատակարանիս վկայութեան ճշմարտութիւնը, թէ յառաջ քան զԱսորեստանեայս՝ եգիպտացիք ջանացած են տիրել Արմենիոյ, Տակիտոսէն բերուած միւս յիշատակարանն աւելի ևս կը հաստատէ. Վասն զի Բրիտտոսի թուականին մէջ ապրող եւգիպտացի քուրմն՝ նմանապէս թերեէն հանուած արձանագրին Remen (Ռեմէն) բառը՝ Արմենիա թարգմանեց Գերմանիկոսի. Միայն փիլ. Շմիթ չէ, այլ մինչև հիմայ եգիպտական հնութեանց պարապող բանասիրաց ամենէն հմուտայնն, այսինքն Պ. Բըրուկս, յետ քսանամեայ մանրադիրն

հետազոտութեանց, այն եգիպտական արձանագրին Ռեմէն անուամբ՝ զՀայս կ'իմանայ. իսկ Լընորման՝ Տ. Կերտնէր վեքթինսին մէկ ենթադրութեան վերայ հիմնուած, այսինքն թէ այն բառին առաջին նշանադիրն մերթ կրնայ չկարգացուիլ և մերթ ր, Լեմէնէն կը թարգմանէ, և զվերին Լիբանան և կամ անոր բնակիչքը կ'իմանայ. Սակայն այս կարծեաց հակառակ կը հաստատեն Տը-Ռուփէ և Մասքերոյ, ինչպէս կը վկայէ նոյն ինքն Լընորման, ըսելով թէ Լիբանանու դիրքն Ռեմէնի նկատմամբ շատ հարաւային էր, և թէ եգիպտական արձանագրութեանց նկարագրած Ռեմէնն՝ յայսկոյս եփրատայ և հիւսիսային ժողովուրդ մ'էր:

Մ. Խորենացին ևս իւր Ա. Գրոց վերջը, մասնաւոր գլխով յաղագս Բիւրասպի Ագա-հակայ՝ Պարսից և Հայոց մէջ եղած առասպելայոց աւանդութեանց պատմութեան մէջ, Սահակ Բագրատունւոյ մասնաւոր խնդրանքը՝ այս կարեւոր գրոյցները մէջ կը բերէ, ասելով. «Առաջնոց նորա բարեբարութեանն (դիւաց նմա ապաստարուութեան), ոչ վրիպեցուցանել կարեն զվրիպեալսն և զուտսն, ուսոցն համբուրումն, անդուստ զվիշապաց ծնունդըս, յայնմ հետէ չարութեան յաճախութիւն, ծախել զմարդիկ ՚ի պէտս որովայնի, ապա Հրուդենայ (Ruten) ումնն կապել զնա սարեք պղնձիւք, և տանել ՚ի լեւան Դըմաքընդ, ՚ի ճանապարհի գննվելն Հրուդենայ, բիւրասպեայ քարչին ՚ի քլոշն, զարթչեն Հրուդենայ, տանել զնա յայրս ինչ ՚ի լեւրին և կապել, և զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել. յորմէ պակուցեալ հնազանդեալ կաշն շղթայից և ոչ զօրել ելանել և ապականել զերկիրն Ե. Ասոնք արդարեւ որչափ ալ որ Խորենացի իրեւ սուտ առասպելներ կը համարի, և ակամայ կամօք՝ ստիպեալ ՚ի թախանձանաց Սահակայ՝ մէջ կը բերէ, սակայն մեզի պատմական և աշխարհագրական կարեւոր կէտեր կը յայտնեն. Յետագայ զլիւոն մէջ այն

դրուցաց մեկնութիւնն ըրած ժամանակ՝ այսպէս կ'ըսէ. « Ասացեալն 'ի նոցանէ Բիւրասայի Աժդահակայ՝ առ Ներութաւ նախնի նոցա. քանզի 'ի բաժանել լեզուաց ընդ ամենայն երկիր՝ ցեղապետք որոյեալք զԻւրաքանչիւր սահմանս ժառանգեցին կարգաւ »:

Բիւրասայ, Ներքուք և Դրմբաւորնդ: Երեք աշխարհագրական անուանք են կամ լերինք՝ երեք տարբեր աշխարհաց մէջ. առաջինն՝ անձնաւորեալ յԱժդահակ՝ Մարաց աշխարհն և արիական ազգը կը ներկայացընէ. երկրորդն՝ անձնաւորեալ 'ի Ներքովթ՝ Ասորեստանեայց աշխարհն և ազգը կը ներկայացընէ. և երրորդն՝ անձնաւորեալ է 'ի Հրուդէն, և Ռուդինաց աշխարհն և ժողովուրդը կը ներկայացընէ, զոր կը յիշեն եգիպտական արձանագիրք ընդ մէջ Միխագետաց և Ասորեստանի:

Խորենացոյ յետագայ խօսքերն ևս նշանաւոր են առ այս. « Զայս Բիւրասայեայ հաւաստի անուն ճանաչեմ ես՝ իտեանորոս Պիւռիդայ, 'ի քաղղէական գետեւ մատենին: Սա ոչ քաղութեամբ (պատերազմաւ), այլ հարստութեամբ և ձաւրտարութեամբ զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր՝ հնազանդեալ Ներքովթայ »: Եւ ապա նկարագրելով անոր պատերազմը՝ կը յաւելու. « Եւ հասեալ սպանանեն զնա մերձ 'ի յեառնն (Բիւրասայ) »: Արդ Խորենացոյ կամ լաւ ևս Պարսից և Հայոց աւանդութեամբ՝ Ռուդինաց, Ասորեստանեայց և Մարաց աշխարհագրական գիրքն ստուգելէն վերջը, յայտնապէս կը անանուի՝ թէ եգիպտական նշանագրոց Ռեմէնն, Թոգաւրման և Ռեմանն Հրէից գրոց, և Դարեհի վշտասպեայ արձանագրութեան Արմենիան՝ են Հայք և Հայաստան, զոր վերոյիշեալ երեք ազգաց աւանդութիւնքն ևս միաբան կը գետնըն Ռուդինաց և Ասորեստանի հիւսիսակողմը, և անոնց սահմանակից կը համարին:

Իսկ թէ արդարեւ ունէր այդ վերագիրը՝ յայտնապէս կը վկայեն Հրէից գրոց գործածական Արարատն և Ասոր

ընտանեայց Ուրարդին կամ Արարդինն: Բայց ինչպէս Հրէից Արարատն կը զանազանէր յԱսորեստանեայց գործածած Ուրարդինն, այսպէս նաև Արիական ազգաց՝ մեր աշխարհին և ազգին տուած վերագիրն ևս պէտք էր որ հնչմամբ փոքր ինչ տարբեր ըլլար առնոց լեզուին համեմատ, և այս է՝ Արմիք կամ Արմենիա. իսկ որովհետև Մարք ևս արիական ժողովուրդ էին ցեղով՝ ուրեմն շատ հաւանական է՝ թէ զարեւրով յառաջ քան զՊարսիկս գործածած ըլլան Արմենիա անունը. ապա թէ ոչ՝ քանի որն և Հերոդոտոս՝ այն ամենահին ժամանակի Պարսից և Հայոց պատմութիւնն ըրած ժամանակ՝ եթէ ըլլար արիական ազգաց մէջ Հայոց աշխարհի տարբեր և հնագոյն վերագիր մը՝ զանց չէին ըններ զայն և նորը միայն յիշէլ:

Եւ իրօք՝ ինչպէս կը ծանուցանէ նաև Սէն-Մարգէն, այդ վերագիրն կը գրտնուի նոյն իսկ ամենահին և նուիրական վիսփերէտի, իպաշնայի, վենդիգատի, և այլոց զանգիկ երկասիրութեանց մէջ. Էրիմիմիւնու կամ Արիւմէմիւն հնչմամբ, որովք Զրադաշտի կ'ընծայուին (Զննտ-Աւեստա, Հար. Ա. մասն Բ. էջ 429), Ուրեմն եթէ այս այսպէս է՝ թող չզարմանան պատուական վերածնողք, եթէ եզրակացընենք՝ թէ ինչպէս եւրոպական գրոց Արարատն և Ասորեստանեայց Ուրարդինն, այսպէս նաև Արեաց Արմենիան և մեր ազնեայց Հայաստանն՝ մի և նոյն հնութիւն ունեցած ըլլան, և եթէ նախնաբար Հայաստանի վրայ խօսած ժամանակ մէջ բերած պարզ նախադասութիւննիս՝ հոս ուզենք եզրակացընել, այսինքն՝ թէ մեր ազգն և աշխարհն զընտանեայց երկու վերագիր կամ առնուն ունեցեր է 'ի սկզբանէ, Հայաւառան և Արմենիա: Առաջինն՝ անտարակոյս 'ի Հայկայ, առաջին միշտ գործածուած. իսկ երկրորդն՝ հաւանօրէն յԱրմենակայ և յԱրամայ ծագած է ապա ժամանակաւ, իբրեւ այն անձանց՝ և ազգաբնակութեան տեղ. իսկ իբրեւ

հոյ ազգութեան առաջին և սկզբնական տիտղոս, աւելի հաւանական կը համարինք՝ թէ 'ի թող—արմայ' իբրև 'ի նախահօրէն Հայկայ կոչուած ըլլան։ Եւ առ այս 'ի հաստատութիւն մէջ կը բերենք Արեւաց այս հնազոյն աւանդութիւնն, զոր խորենացի (Ա. Ժ. Բ.) կը յիշատակէ յառեւ, թէ Արիք և Արամեանք զմեզ Արմենիք կը կոչեն։ Վասն զի երբայական մատենագիրք ևս՝ այսու յորջորջմամբ կը ճանչնային զՀայս կամ զԱրմենիա։ Նոքա Արարատեան աշխարհն կամ թագաւորութիւնն յիշած ժամանակ՝ զանց չեն ընկեր բնաւ նաև տունն թորգոմայ յարեւ զինի, (ըստ երբայական բնագրին թողարմայ), որ աւելի սեփական է. մանաւանդ թէ դեռ որոշ բացատրելով՝ Արարատն և Ուրարդին՝ իբրև աշխարհագրական գիրք կամ առանձին թագաւորութիւն մը և նախարարութիւն մասին ինչ որդուց թողարմայ գործածուած կ'երևի։ Սակայն այսու նախնաբար ունեցած կարծիքին ոչ միայն եղծած չենք ըլլար, այլ լաւ ևս հաստատած, թէ Արայի անուանէն յառաջ կու գայ, և դաշտ կամ տեղի բնակութեան կը նշանակէ։ Ինչպէս մնացած Արմենիոյ՝ Արամ կամ ուրիշ մասերն ալ՝ յանուն Արմենակայ և Արամայ կոչուեցան ժամանակ ժամանակ. վասն զի ինչպէս մեծին Արմենիոյ աշխարհագրական սահմանքն, նոյնպէս և վերագիրքն՝ այս հայ նահապետաց և թագաւորաց հետ սերտ կապուած են և յաշորդաբար ընդարձակուած։ Սակայն այս յայտնի է թէ իբրև ամբողջական և ընդհանուր ազգութիւն և տուն թագաւորութեան կազմողք՝ են թողարմացիք կամ թորգոմացիք՝ ըստ Հայոց, իսկ ըստ Արեւիք՝ Արմիք։ Առ այս՝ բաց 'ի Ս. Գրոց և Յովսէփոսէն՝ կան նաև ուրիշ դրացի ազգաց կենդանի աւանդութիւններ, քրաբորով՝ իւր վստձառականութիւն 'ի վիրս կոչուած երկասիրութեան մէջ, վրաց աւանդութեան մ'առնելով կը ծանուցանէ թէ Հայք, վիրք, լէկդիք, Խնկուէք և Կովկաս.

Պրոս Գ.

ցիք՝ մէկնախահօրէ յառաջ կու գան, որ թորգոմայ (թողարմայ կամ թորգոմ) կը կոչուէր։ Եւ ուրիշ գերմանացի ճանապարհորդ մը՝ Կուլտենշտատ, կը յաւելուէ՝ նոյնպէս այն ազգին ուրիշ աւանդութեան մը՝ թէ թորգոմայ եօթը որդիք ունէր, որոց մեծն Հաւոս (Հայկ)՝ էր Հայոց նահապետ։ Ուստի մենք որչափ որ այս աւանդութիւնները բոլորովին անժխտելի կամ հաստատուն ապացուցութիւն չենք համարիր մեր կարծեացը, սակայն և ոչ այլ մեթոդի. որովհետև իւրիշ կը միաբանին մարիբասեան պատմութեան և Հրէից գրոց հետ, թէ թորգոմայ՝ Ծննդոց թողարմայն իւր ստուգիւ, և Հաւոս ըսուածն ալ՝ Հայկն. վասն զի Ս. Խորենացին զՀայկ՝ համաձայն այդ վերջի աւանդութեան՝ անմիջական սերունդ կը համարի թորգոմայ։ Եւ զՄ'նկուէլս իսկ անտեղի չէ մանաւագեան ցեղէն մնացած ժողովուրդ մի համարել։ Նոյն իսկ Գ. դարու տոհմային մատենագիրքն երէն ոմանք՝ օտարազգի ըլլալուն պատճառաւ, այն երեք վերագիրք աւանդեն և իրենց յատուկ նշանակութեամբ՝ մեր անդրադարձուցած կէտերով և 'ի միասին գործածած ժամանակներն՝ անշուշտ զայս կ'ուզեն ակնարկել։ Ազգութեան գեղ (Գլ. Ժ.) կ'ըսէ. « Բանդի յԱրարատեան գաւառին 'ի թագաւորանիստ կայանն բլրեցին Հայոց Տաւնե թուրքունայ (թուրքունայ) շնորհք քարոզութեան՝ աւետարանին »։

Սակայն մարիբասեան երկասիրութեան աւանդած Հայոց իշխանաց ազգաբանութեան ծագման, հնութեան և ազգաբնակութեան դէմ ելած դժուարութեանց մեծագոյնն՝ Հերոդոտոսին է, որուն համաձայն են բոլոր հետագայ դարուց յոյն պատմագիրք՝ ըսելով թէ Հայք են ծագմամբ փոխգայի, Բասուլինսոն ևս Հերոդոտոսի թարգմանութեան մէջ՝ ինչպէս վերն յիշեցինք, հետեցեալ յոյն պատմահօր կարծեաց, բայց աւելցնելով՝ թէ արեւմտեան Հայաստանի բնակիչն, զորս Հրէից գրեքն՝ թորգոմ, և տոհմայինք

մեր՝ սրդէք թորգումայ կը կոչեն, եօթ-
ներորդ դարուն վերջերը զաղթական
եկան ՚ի փոխդիոյ ՚ի Հայս. և թէ Ա-
րարատայն և վանայ թագաւորութեան
կարծեցեալ Հայերն, զորս Հնգամա-
տեանն Միւնչոյ և Արարատեանն քա-
ղաւորութիւն, Ասորեստանի սեպածե-
ներն՝ Մամուկի և Ռարալի, և Հերոդո-
տոս՝ Ալարոտ կը կոչեն, տարբեր ժո-
ղովուրդք էին ծագմամբ, լեզուով, կը-
րօնքով և ազգականութեամբ: Այժմ՝
չի դիտուիր թէ անդիւրացի բանասէրն
մի և նոյն կարծիքը պինդ ունի դեռ
եթէ ոչ: Եւտ այնորիկ ելաւ զազդիւ-
ցի բանասէրն Պ. Լընորման, որ ամե-
նէն աւելի եռանդեամբ և ընդարձակ-
օրէն պաշտպանեց՝ ոչ միայն իւր Առ-
ձեռն պատմութեան, այլ յամին 1881
իններորդ անգամ հրատարակուած
Հիւն ազգաց պատմութեան Ա. և Գ.
հատորոց մէջ: Սակայն կը կարծուի՝
թէ Հերոդոտոսի և Ռատուլինսի վը-
կայութենէն աւելի՝ իւր այս հետազայ
ենթադրութիւններէն մըլուած է նա.

Ա. Հայաստանի մինչև ցարդ զըտ-
նուած սեպածե արձանագրութեանց
լեզուն՝ բոլորովին տարբեր է արդի
հայերէնէն (զրաբարէն). ուստի այնպի-
սի ժողովուրդ մը փորագրած է զա-
նոնք՝ որ Հայոց հետ մերձաւորութիւն
չունէր ոչ լեզուով և ոչ ցեղով, և թէ
մինչև ցՁ. դար՝ բացարձակ տէր էր
Հայաստանի:

Բ. Կրօնից և աստուածոց տարբե-
րութիւնն, զորս կ'ընթեռնուէր բանա-
սէյք Հայաստանի Արդ-Ռումի, վանայ
և Քովուի սեպածե արձանագրու-
թեանց մէջ՝ կը ցուցնեն թէ անոր
նախնի բնակիչքն (Ալարոտեանք)՝ բուն
Հայերէն կամ ՚ի թորգումացոց տար-
բեր ժողովուրդք էին. որովհետև Անա-
հիտ, Սպանդարատ, վահագն և Մա-
նէ անուանց տեղ՝ կը յիշուին խալտիս
կամ խալտիա՝ ըստ Սարյուքիւնի ար-
ձանագրութեան:

Գ. Նահանգաց, քաղաքաց, իշխա-
նաց, և այլն, անուանք՝ բոլորովին օ-
տար կ'երևին յանուանց՝ զորս կու-

տան մեզ խորենացի և այլք բաղումը:

Դ. Ալբան կամ Ալբանաց անուան
հետքն, որ արեւմտեան Հայաստանէն
սկսեալ մինչև ցփուրգիա և ցՏրոյիա
եղած երկիրներու ախարհագրական
տեղեաց, լճաց, հովտաց և անձանց
վրայ յաճախ կը տեսնուի, կը ցուցը-
նեն թէ փոխգացիք՝ որոնց կը վերա-
բերին բուն Հայերն, փոքր Ասիայէն
զուրա՝ զրաւած էին զաղթականու-
թեամբ նաև զՄիսիա և զՏրոյիա. և
այս զաղթականութիւնս Տրոյիոյ պա-
տերազմէն շատ յառաջ սկսաւ՝ փոքր
Ասիայէն ՚ի Յունաստան, փոխանակ
ուզղակի յԱտրպատականէն և ՚ի Հա-
յաստանէն անցնելով՝ Եւրասիեան Պոն-
ոսսի ափունքէն շրջան ըրին: Սակայն
յետոյ եօթներորդ դարուն վերջը վե-
րադարձան ՚ի թրակիա և անտի ՚ի
Հայաստան, և հալածելով զԱլարո-
տեանս՝ անոնց երկիրը, լեզուն, կրօնքն
և աւանդութիւնները՝ իրենց սեփակա-
նեցին, և անոնց առաջին թագաւորն
եղաւ Տիգրան Ա. կամ Երուանդեանն:

Ստուգիւ զազդիւրացի արեւելագիտին
կարծիքն, ինչպէս կը տեսնուի, պատ-
մական, լեզուաբանական, կրօնական
և աշխարհագրական քանի մի սկզբանց
կամ իրաց վրայ հաստատուած կ'երևի.
ուստի դրականապէս և բոլորովին զա-
նոնք մերժելը՝ դիւրին բան չէ: Սակայն
այս հարցմանս՝ թէ արդեօք այն սկզբ-
նական ճամարտութիւնքն ճիշդ կը
համապատասխանեն հեղինակին ինք-
նահնար եզրակացութեանցը, և կամ
դեռ աւելի բացայայտ խօսելով՝ ար-
դեօք այն իրական հաւաստիքն իրենց
պարտապատշաճ տեղը գրուած և
յարմարած են, այս մասին շատ կը
տարակուսինք: Ուստի մեր տարակու-
սանաց և Լընորմանի խառնափնջորած
կէտերուն խաւարը փարատելու, և Ալա-
րոտեան և թորգումեան Հայոց պատմա-
կան հորիզոնը պարզելու համար, զազ-
դիւրացի բանասիրին ձեռքով կ'ուզենք
շօշուփել Հայաստանի պատմութեան
այն նոր յորինուածութիւնը, և անոր
մէջ բերած իրարու հակասող հաւաս-

տեղը՝ յայտնի ընել անոր տկարութիւնքն և ճշդել զայնս։

Առաջին դժուարութեան վերադառնալով կ'ըսենք թէ իրօք Հայաստանի աշխարհական կոչուած սեպածն արձանագրութեանց լեզուն անմասն կը տեսնուի այժմեան գրաբարին. բայց կը հարցնենք նմանապէս, արդեօք այժմեան հայերէն գրաբարն կը նմանէր Արարատայ այն հին հայերէն աշխարհաբարին։ Բնաւ չի գիտցուիր։

Բ. Արդեօք Հայք ինչ լեզուով որ կը խօսէին՝ կարող էին նոյն լեզուով ևս գրել։ — Ոչ, կ'ըսեն լեռնորման և այլք. վասն զի Ուրարդիք իրենց թաղաւորին Բէլիդատուրիսի ժամանակ Ասորեստանեայց սեպածն գրութիւնը փոխ առին։

Գ. Արդեօք Ալարտեան հայերն՝ Ասորեստանեայց այբուբենական գրութիւնը միայն առին և անով միշտ վարեցան։ — Ոչ. նոյն բանասիրին վերակայութեամբ կ'ըսենք՝ թէ Ասորեստանեայց (գուցէ թէ արիական ազգաց ևս) գրութեան բոլոր սլարգ, թաղաւորեալ, նշանագրական գրութիւնքը առած էին, և թէ չորս արձանագրութիւնք՝ յորս է Մասասարի թագաւորին Ուրմաւայ արձանագիրն՝ տարբեր են մնացածներէն, և նոյն իսկ Բէլիդատուրի որդւոյն Իսպուհինիսի մէկ արձանագրութիւնը (36 թիւ Ծուլցի) տեղացւոց լեզուով գրուած է։ Կան դարձեալ այնպիսի արձանագրութիւններ՝ որոնց ընթերցումն անկարելի եղաւ ստուգելի մինչև ցայժմ. վասն զի այնպիսի նշաններ են՝ որ խօսած լեզուէն տարբեր են, թէպէտ և զայն արտայայտելու համար իսկ գործածուած ըլլան։

Դ. Ալարտեանց ցեղական գոյութիւնն եթէ սեպածն գրութեանէն դատելու ըլլանք՝ յԱսորեստանեայց յառաջ եկած պիտի ըլլային. սակայն այն երկու ազգաց դարական և մշտնջենաւոր առեկտիւնն առ իրեարս և անոնց պատմութեան մանրամասնութիւնքն՝ յայտնապէս ասոր հակառակ կը կ'ապացուցանեն։ Արդ եթէ ոչ յԱ-

սորեստանեայց՝ ապա ուստի յառաջ կու գային, ինչ ժողովուրդ էին, և ուստի եկան 'ի Հայս։ Լեռնորման կը խոստովանի թէ չի զիտցուիր։

Եւ կը հարցնենք, արդեօք Ասորեստանի և Հայաստանի սեպածն արձանագրութեանց ընթերցումն լեզուական և ստղգ գիտութիւն կրնայ համարուիլ։ — Ոչ բնաւ. այլ կուտշմիթի հետ կը համարակիւնք ըսել թէ բազմապիսի և ընդգիծամարտ շաշխն և շառաշխն մի է դեռ՝ բանասիրաց նորահնար ստեղծուածոց։ Ուրեմն անտեղի է և հակասական՝ 'ի միջի այստափ անստուգութեան հակառակամարտ զեպաց և բարեւոնական խառնակութեանց՝ բացարձակապէս եղբակացընել թէ Արարատեան թագաւորութեան Ժ. Թ. Ը. և Է. դարուց ժողովուրդն՝ այլազգ էին Զ. դարու Հայերէն կամ յորդւոց թորգումայ։

Երկրորդ դժուարութեան անցինք։ Յիրաւի, տոհմային մատենագրաց յիշատակած աստուածներն, այսինքն Անահիտ, Սպանդարատ, Վահագն և Մանէ, բոլորովին տարբեր հնչումն ունին խորասպատի արձանագրութեանց մէջ կարգացուած Խալտիս, Պիւն և Սաւուս աստուածներէն. այս մասին ըսելիք չունինք։ Սակայն Ա. այն անուանքն ոչ միայն Ուրարդացւոց բռնիկ գրով, այլ նոյն իսկ գաղափարագիր նշաններով գրուած են. և այն նշանագրերն ևս Ասորեստանեայց լեզուով կ'ընթերցուին բանասէրք, և բռնիկ լեզուին բանալին դեռ բոլորովին անծանօթ է։ Բ. Տոհմային մատենագրաց մեզի աւանդած այս չորս անուանքն՝ ոչ թէ նախնի կրօնից աստուածներ են, այլ իբրև Կիւցաղնական ժամանակի աստուածացեալ անձինք. ուրոյ ոմանց պաշտամունքը շատ դարերէ վերջը, Արշակունեաց ժամանակ, փոքր Ասիայէն անցաւ 'ի Հայս։ Գ. Տոհմային մատենագրաց մեզի աւանդած հնագոյն աստուածներն կամ զիք, օրինակ իմն, Արամազդ (զանդկերէն Աուրամազդա), Ազատ (իզէտ կամ Ե-

զիտ), Միհր, Տիր, և այլն, ոչ անցա-
նեն անոր քան զժամանակ Մարաց և
Պարսից թագաւորութեան և զբազա-
տական կրօնից. ուստի ամենեին հա-
կառակ չեն ելլեր Արարտեանց աս-
տուածոց, եթէ անոնց ընթերցումն
ստոյգ ևս լինէր. որովհետեւ վերջինե-
րը միաստուածութեան և եւաստուա-
ծութեան կամ բնութեան կրօնից կը
վերաբերին, իսկ տոհմայնոց յիշած այն
չորս հատը՝ կռապաշտութեան կամ
բազմաստուածութեան, որ շատ դարե-
րով վերջը մտաւ 'ի Հայսր. Դ. Ալարու-
տեանց վերը յիշած աստուածներն ոչ
միայն հակառակ չեն, և չեն կարող բնաւ
եղծանել, այլ շատ լաւ կը միաբանին
և կը հաստատեն զկրօնական աւանդու-
թիւնս: Արդարեւ, մարիբասեան երկա-
սիրութեան հեղինակն կ'աւանդէ թէ
Հայկազունեաց նախնի կրօնքն՝ էր բը-
նութեան կրօնք. իսկ որովհետեւ Ալա-
րուտեանց վերոյիշեալ երեք աստուա-
ծութիւնքն բնութեան էին, ըստ վը-
կայութեան նոյն իսկ լընորմանի, այս-
կիքն է՝ մընոյրդաթի, երեքաց, յոշաւ,
շոր երկնից, արեգական և յուսնի,
ուրեմն հետեւութիւնն յայտնի է:

Պ. Լընորմանի երրորդ գծուարու-
թիւնն, այսինքն անուանց և տեղեաց
մասին, երկրորդ ընդդիմադրութեան
հետ նոյն ըլլալով, նախնաբար անոր
առթիւ մէջ բերած փաստերնիս՝ մա-
սամբ մը առ այս ևս կը զօրեն. Այժմ
'ի նկատի ունելով Հայաստանի և թոր-
սապատի սեպածեւ արձանադրութիւն-
քը, անոնց ծագման և գրութեան բո-
լոր հանգամանքներով, կ'ըսենք թէ ա-
նոնց մէջ յիշուած աշխարհագրական
և պատմական անուանքն փոքր ինչ
տարբերութեամբ՝ նոյն են ընդ ա-
նուանց տեղեաց և իշխանաց, զորս
կ'աւանդէ մեզ մարիբասեան երկա-
սիրութեան հեղինակն: Օրինակի հա-
մար, Ուրարդի՝ նոյն է ընդ Արարա-
տայ, Մաննա կամ լաւ ևս Վաննա՝
ընդ Վանայ, Մասասար լեռն՝ ընդ
Մասիս սարին, Մեկիտուա կամ Մեկի-
տի՝ նոյն է ընդ Մեկիտինէի, Արսիս.

ուս ընդ Արծիշայ, Մոշասար կամ
Մուշ-ա-սար ընդ Մուշ գաւառին,
Մեննա՝ ընդ Մանաւազայ կամ Մինույ,
Արմինա, Ռեմենեւ և Ռեմանա՝ նոյն
են ընդ Արմենիոյ. Գուշուքսի ընդ
Կոմագենայ, Խալտիսն՝ ընդ Խաղ-
տեաց գաւառին, Դարձեալ սեպածեւ
ներու Արմիոյ ըսուած քաղաքն՝ նոյն
կ'երևի ընդ Արարտեայ թորենացոյն,
և Արճակիս գետն՝ ընդ Արածանույ,
(այսինքն է Արա-ժանի), Ինչպէս Խալ-
խար՝ նոյն է ընդ Խորխուայ, որ կը
տրուի Վանայ վրայ նայող քարաբե-
դին, ևս և Խորխուունեաց երկրին, և
Կուշուքս ընդ Խնուայ: Ասոնք են նը-
մանութիւնք աշխարհագրական յա-
տուկ անուանց. տեսնենք այսուհետեւ
զյատուկ անուանս իշխանաց:

Արամ Ա. որ Ներքովթայ կոթողին
վրայ իբրեւ դիւցազն և առաջին թագա-
ւոր կը ներկայանայ Ալարտեանց՝ նոյն
է թէ պատմական դիպօք և թէ ժամա-
նակագրական կարգաւ՝ ընդ Հայկա-
զունեաց առաջին թագաւորին՝ Արա-
մայ: Մենուշաւ Ա. նման է Մանաւազ
նահապետին. Ալիւնուշի՝ ընդ Գնու-
նույ. Հակոբ՝ նման է Հայկայ, և Ռեյցէ
կամ Ռըլէ՝ նոյն է ընդ Հոյէի կամ
Հրաչէի, եթէ ոչ տառերը՝ ա կամ Ռ
տառերու փոխենք, ինչպէս կ'ընեն բա-
նասէրք, որով և Ռըրարդիւն՝ ընդ Արա-
րատայ կը նոյնանայ: Այսպէս նաեւ
Արգիւտիս՝ Սկայորդոյն ձայնին ա-
ղաւաղեալն է, և Ռըշուշուն՝ Արբունի,
որովհետեւ ր և շ տառերն փոխադար-
ձաբար գործածուած են 'ի սեպածեւ
արձանագրութիւնս, կ'ըսէ Կ. Վիլքի-
նոն. Ռըրգանա՝ արդեօք թորենացոյ
յիշած Յուսակ կամ Առնակ յատուկ
անուանց նուազականն չէր, և չէր
կարդացուեր Յուսանակ և կամ Առնակ:
Արդ եթէ ուզենք բանասիրաց նման
աղաւաղելով կարդալ այն սեպածեւ
արձանագրութեանց յատուկ անուան-
քըն, (որոնց ընթերցումն ոչ միայն
շատ առաձգական է և ըստ տեղոյն
կը յաւելու և կը նուազի, և մեծաւ
մասամբ մտայնաժին է և անստոյգ),

այն ժամանակ կարող էինք տոհմային մատենագրաց և սեպածններու բոլոր անուանց մէջ կատարեալ համաձայնութիւն մի յորինել: Սակայն այս՝ յուսահատ ճիգ մը կը լինէր, ինչպէս ուղեւ խաւարէն լըյս ածել, և յորն չէն՝ ինչ մի: Ուստի մէկդի թողով այսպիսի բծախնդրութիւններ՝ այսպէս կը ձեռնարկենք ընդդէմ գաղղիացի բանասիրին և ընդդիմադրողաց Մարի բասեան հեղինակութեան: Արդեօք սեպածն արձանագրութեանց մէջ յիշուած անուանքն՝ Ուրարդացւոց բնիկ հնչմամբը գրուած էին՝ եթէ անոնց սահմանակից վաննոյ, Մուսասարի և Նայիրի գաւառական լեզուներով: արդեօք Հայոց պատմութեան հեղինակն այն երկրին աշխարհագրական և անձնական անունները՝ Արարատայ ժողովրդական մէջ մնացած կենդանի աւանդութիւններէն առած էր եթէ քաղդէական մատենէն: Այս հարցերէն որն ալ ընդունելու ըլլանք՝ դարձեալ անհրաժեշտ պէտք է՝ որ այն անուանց մէջ տարաձայնութիւն տեղի ունենայ: Ասոր շօշափելի օրինակները խիստ շատ են. և ո՞վ չի տեսներ մի և նոյն անուանց՝ օտարաձայն հնչմունքները զանազան աղգաց և լեզուաց մէջ. ինչ կ'ըսեմ՝ զանազան աղգաց, այլ նոյն իսկ մի և նոյն աղգի այլ և այլ գաւառական խօսքի մէջ: Հայաստանի աշխարհացոյց տախտակն եթէ դիմացնիս առնենք՝ կը տեսնենք ստուգիլ թէ շատ և շատ յատուկ անուններ ոչ թէ մէկ, երկու, երեք, այլ չորս և մինչև հինգ տարբեր հնչմանց ենթարկուած են այլ և այլ ժամանակաց մէջ, այլ և այլ աղգաց տիրապետութեամբ, և այլն. և որ դեռ աւելի զարմանալին է՝ դուցէ մի և նոյն աղգաբնակութեան աղգեցուծեան ներքե: Ինչ նմանութիւն կայ արդարև Մկո անուան՝ Մկրտիկ հետ, և Մրտո և Մրատ հնչմանց՝ ընդ Մարտիրոսի: Ինչ նմանութիւն կայ Յարդիև և Արիև հնչմանց՝ ընդ Յարդիև ձայնին, և Տեխան, կրպ, Սրգէ,

Խէ, և Բլտո՝ ընդ Ստեփանոսի, Կարապետի, Սարգիսի, Խաչատուրի, և Բաղդասարայ: Այսպէս նաև Հայաստանի աշխարհագրական անուանց մեծագոյն մասն՝ տարբեր կերպով կը հնչուին առ արդի ճիրակացիս և առ այլ գաւառաբնակ ժողովուրդս: Սակայն եթէ ճիրակայ՝ կեդրոն գաւառին բնակիչն անգամ այսչափ աղաւաղած են և կ'աղաւաղեն զհայեցի հնչմունս, որչափ առաւել ուրեմն շրջակայ գաւառաց մէջ: Ուրեմն ինչ որ կը տեսնենք այժմեան Հայաստանի գաւառաց և ժողովրդոց մէջ նոյն կը հանդիպէր նաև հնոյն Հայաստանի գաւառաբնակ ժողովրդոց մէջ, և թերևս շատ աւելի իսկ՝ այբուբենական գիր և կանոնաւոր լեզու մը չունենալուն պատճառաւ:

Գալով արդ չորրորդ դժուարութեան կամ Հնգամատենին մէջ յիշուած Աւքանաղ անուան՝ կը տեսնենք թէ ըստուգիւ շատ ընդարձակ գեր խաղացած է արևմտեան աշխարհաց մէջ: Հին աշխարհագիրք՝ զոյգ ընդ Հոմերի (իլիակ. տող 364) Աքանիա անուամբ գաւառ մը կը ցուցնեն բնակեալ ի փաիգացւոց և ի Միսիացւոց: Աւքանեան լիճ մը կը նշանակէ Ստրաբոն (ժ. Էջ 565), որուն եզերքը շինուած էր Նիկիա, և ուրիշ մ'ալ փաիգիոյ հարաւային կողմը, ըստ վկայութեան Ատիանոսի (Արշ. Աղբ. Վ. 29): Աւքանեան գետ մը յիշի առ Պլինիոսի (Բն. Պատմ. Ե. 40) յարեմտեան Բիթանիա. Տրոյիոյ դիմաց կը հանդիպինք Աքանեան կղզեաց. Աքանեան նաւահանդիստ մը կը նշանակէ Պլինիոս (Բն. Պատմ. Ե. 32 և 38) այս գաւառին և Լիւզիոյ սահմանադրիս վրայ. Պրիամիսի որդւոյն անունն Աքանիոս էր, կ'ըսէ Ապոլլոդորոս (Գ. 42), այսպէս նաև Էնէասայ որդւոյն:

Ոմանք ի բանասիրաց Աքանաղ անունը՝ Եւքսինեան Պոնտոսի հետ նոյն կը համարին, ըսելով թէ Սև ծովն ի սկզբան πόντος ἄξινος կը կոչուէր, և թէ յետոյ փոխեցաւ ի πόντος εὐξείνους՝ Սակայն թէ այդ ընդարձակածաւալ և

խորհրդաւոր անունը, զոր Հնգամա-
տեանն իբրեւ որդի Գոմերայ կը յիշա-
տակէ, նոյայ որդւոց ազգաբանութեան
մէջ ինչպէս անձնաւորեալ է, յայսմ
կը կայանայ բոլոր կնճիռն: Պ. Լընոր-
ման՝ գաղղիական թափով մը՝ իբրեւ ա-
ղեքասնորեան սրով կը լուծէ կորդեան
հանգոյցէն բիւր անգամ աւելի կըն-
ճուեալ այդ հանգոյցը, և կ'ըսէ՝ Ասքա-
նիազ՝ փոխդիա կը նշանակէ, կամ հոն
բնակող ժողովուրդը այնպէս կը կու-
շուէր, և թէ երեմիա այս անուամբս՝
զՀայաստան կ'իմանայ, և այս անունն
ստուգապէս կը ցուցնէ փոխդիայէն
սերեալ ժողովրդեան մասը, այսինքն է
բուն Հայ բնակածներն: Արդարեւ, գաղ-
ղիացի բանասիրին թուի՞քն շատ բար-
ձրէն կը ճախրեն, և թերեւ ամենայն
ազգասէր սրտերու պարծանաց նիւ-
թեր աւելցնեն, այնու զի Հայ ազգն
ևս անյիշատակ ժամանակէ 'ի վեր՝
մինչև ցՏրոյիս անգամ մեծամեծ գեր
խաղացած է: Սակայն մենք չենք կըր-
նար զճշմարտութիւնն ազգասիրու-
թեան սիգապանձ զդացման զոհել,
և ոչ ալ զենթագրութիւնս՝ քան ըզ-
պատմական աւանդութիւնս վերադաս
կարգել: Տրամաբանական է արդեօք
պարզապէս Ալեքանիա անուանէն՝ յան-
կարծ փոխդիա անուան անցնիլ, և
փոխդիա անուանէն՝ Արմէն կամ Ար-
մէնիա անունը ցայտել: Անչք մը՝ որոյ
պարագ միջոցն յայտնապէս կը տես-
նուի. և հազիւ երբեք կամ մանաւանդ
թէ բնաւ իսկ պատմական և ակնյայտ
նի հաւաստիք չկան՝ որ զանոնք իրա-
րու հետ միացնեն սերտիւ, և անցնեն
զմեզ այն ազգաց նախնի պատմու-
թեան:

Եթէ ուշի ուշով դիտելու ըլլանք՝
քանի քանի հակառակամարտ վկայու-
թիւններ ևս յոսին չեն կանգնիր և
զանոնք եղծաներ: Ո՛րչափ անգամ հե-
ղինակին աստի և անտի կուտակեալ
փաստերն և աստութիւնն անգամ իրա-
րու հակառակ շաղկօք կ'ընթանան՝ ակն
յայտնի կը տեսնուի: Ինչ կը նշանա-
կէ իրաւցընէ անոր (Լընորման, Հին

ազգ. պատմ. Թ. տպ. էջ 292) այս
խօսքերն, թէ « Ալեքանազ այլուր միա-
ցած է ընդ ժողովրդոց Արարատայ և
Վաննայ » . և յէջ 294 « Ուրարդիք և
Մինույ կամ Վաննայի ժողովուրդն
մինչև ցեօթներորդ դար վերաբերու-
թիւն չունէին Ալեքանազեան և Թորգո-
մեան Հայոց հետ, լեզուով և ցեղով
տարբեր ըլլալով » : Ինչ կը նշանակեն
դարձեալ նոյն հեղինակին այս խօս-
քերն, թէ « Թորգոմ կամ Թուգարմա՝
Արևմտեան Հայաստանը կը ներկայա-
ցընէր, այս բառին հնագոյն իմաստիւք
կամ տումամբ, և (էջ 293) թէ Թորգո-
մա՝ Ասորեստանի հիւսիսային կողմը
կ'իյնար » : Ինչպէս Ազար յանապատի՝
այսպէս այլ աշխոյժ բանասէրն թէ-
պէտ և ունի իւր գիմարը պատմական
ասպարէզ մը, թէպէտ և կ'ուղէ գրու-
նել ամենականոր կէտ մը և անոր եզ-
րակացութեանը հասնիլ, սակայն բուն
աղբիւրը չտեսնելով կամ չուզելով
տեսնել, այն պատճառաւ աստանդա-
կան կը թափառի Հայոց և Հայաստա-
նի պատմական հորիզոնէն դուրս :
Այս յորդառատ աղբիւրն, այս բազ-
մաբեղուն ուխտիսն, որ կարող է նա-
խապատմական ժամանակի պատմու-
թեան անապատին մէջ արչաւող հե-
տախուզին ծարաւը լեցընել է Մարի-
բոսեան երկասիրութիւնն՝ օժանդա-
կեալ 'ի Գրոց Հրէից և 'ի տոհմային
կենդանի աւանդութեանց աշխարհիս
Հայոց :

Հանճարեղ բանասիրին պատմական
ասպարէզն և անոր տեսութեան կա-
րեոր կէտն՝ է Արարատեան կամ Ալա-
բոտեանց, Թորգոմայ որդւոց և փոխ-
դիաբնակ Հայ ազգաբնակութեանց
մէջ եղած ցեղական և պատմական
միութիւնը, որ մերթ այն երեք ժողո-
վուրդները թուի թէ կ'ամէ 'ի մի միու-
թիւն կեդրոնական, և մերթ թուի ան-
ջատել 'ի միմեանց՝ ազգաւ և աշխար-
հաւ. այս պատճառաւ նա ալ մերթ
յայսկոյս դողցես կը հակի և մերթ
յայնկոյս՝ վարանելով: Արդ եթէ Հերո-
դոտոսի այս վկայութեան զօրութեամբ,

ինչպէս կ'ըսէ, կը համարձակի զԱլա-
րոտեանս զանազանել 'ի Հայոց Զ. դա-
րուն՝ նախ քան զԳրիստոս, որովհետեւ
յոյն պատմահայրն կը զտնտելանէ ըզ-
Ալարոտեանս և զփոխագիտեանս Հայս
բնակութեամբ 'ի միմեանց, այն ժամա-
նակ կը դառնանք առ Հերոդոտոս և
կը հարցընենք. Ուստի էր անոր աղ-
բիւրն, ինչ պարագայից մէջ կ'ընէ նա
այն զանազանութիւնը, և ինչ չափի
մէջ հասկընայու ենք զայն:

Հերոդոտոսի աղբիւրն՝ Հայոց 'ի
Փոռիզիոյ գաղթելու մասին՝ Յունաց
ժողովորդական և յեղաշրջեալ մէկ ա-
ւանդութիւնն եղած պիտի ըլլայ, զոր
Ստրաբոն (ԺԱ. երես 802 և 812) և
Դիոնիսիոս (694) մէջ բերին: Սակայն
Ստրաբոնի ԺԱ. գրոց 769 երեսին մէջ՝
յայտնապէս կը տեսնուի՝ թէ այն ա-
ւանդութիւնն Արդոնաւորդաց կամ
յարեթածին ժողովրդոց ծովային և
ցամաքային վաճառականութիւնը կը
ցուցընէ: Եւ զայս կը հաստատեն
Կիւրսիլիոսի փարսայիացւոյ և Մեդիո-
սի Լարիսացւոյ հետադայ խօսքերն.
« Պատմեն թէ Արմենիոս ճանապար-
հորդեաց ընդ Յասսնի 'ի Կաքքիս, յի-
բերիս, յԱղուանս, 'ի Հայաստան և
'ի Կողմանս Մարաց »: Արմենիոս՝ աստ
ընդհանուր Արմենիա կամ Հայերը
հասկընալու ենք, որոնք ըստ պատմա-
կան վկայութեան և ըստ ընդհանուր
կարծեաց՝ Հայաստանէն գաղթեցին
դէպ յարեմուտս՝ 'ի Թետալիա և 'ի
Լարիսսա. բայց Յոյնք սնապարծու-
թեամբ այլափոխեցին այն աւանդու-
թիւնը. (Տես Բազմ. Հանդ. 1881—2
Պրակ Բ. « Հայ ազգն և իշրաւ ընդդ-
կոչիւն ըրաճ օգուտներն » վերնա-
գրով մեր յօդուածները):

Ուրեմն Հերոդոտոսի այն կարծիքն,
ըստ վկայութեան Լընորմանի, չի միա-
բանիր արդի արեւելագիտաց ընդհա-
նուր և ընդունելի եղած կարծեաց հետ:
Մենք ևս այս հետադայ փաստերովս
կը յուսամք ապացուցանել թէ Հայք
ծագմամբ փոխգացիներէն յառաջ ե-
կած չեն, և ոչ իսկ գաղթականու-

թեամբ Զ. դարուն մէջ նախ քան ըզ-
Գրիստոս:

Ա. Պրիզք կամ Փոռիզիա անունն՝
բնաւ նմանութիւն և յարաբերութիւն
չունի Հայաստանի կամ Արմենիոյ ա-
նուան հետ, ինչպէս նաև Ալքեանալ
հնչումն:

Բ. Եթէ իրօք այնպիսի աւանդու-
թիւն մ'եւ եղած ըլլար, Փոռիզիացոց
կամ փոռիզիարեանկ Հայ ժողովրդոց
մէջ պէտք էր մնացած ըլլալ, և ոչ թէ
յոյն տարերաց և աշխարհաց մէջ փըն-
տեռել, որ յոյժ անտեղի է:

Գ. Ոչ փոռիզական և ոչ ալ Աքա-
նալ անուան հետքերը կարող է որ
գտնել առ տոհմային մատենագիրս,
'ի ժողովրդական աւանդութիւնս և
յաշխարհագրական տեղիս. Խորենա-
ցին կայ միայն, իւր Ա. գրոց ԻԲ. գլու-
խոյն մէջ, և Երեմիա մարգարէի խօս-
քերը Արարտայ թագաւորութեան
մասին մէջ բերած ժամանակ, յորս
է և յիշատակութիւն ապքանազեան
գնդին:

Դ. Յոյն պատմագրաց մեզի աւան-
դած փոռիզացւոց քանի մը բառերն,
ինչպէս հւաց, ջուր, կրակ, շուն, և
վերջի տարիներս Ալիս և Իւիս գետե-
րուն հովիտը գտնուած արձանագրու-
թիւնքը, զորս Դէսիէ և այլք փոռիզա-
ցոց կ'ընծայեն, կը ցուցընեն ստուգիւ-
թէ այն բառերը արիական կամ հնդեւ-
րական բնոյն կը վերաբերին, բայց
աւելի յունարեանի և լատիներենի հետ
նմանութիւն ունին, և ոչ բնաւ Հայե-
րէն հնչումն:

Ե. Փոռիզացւոց կրօնից մէջ յիշուած
աստուածամայրն Կիւբելէ, Ռէա կամ
Ակտիսիս, և Սաբազիոս կամ Բաքոս,
ամենեւին նմանութիւն չունին ընդ մօրն
աստուածոց Հայոց՝ Անահայտ և այլոց
հնաւանդ դից և դիցունհաց, որոնք
անհրաժեշտ պէտք էին ունենալ և ան-
ջնջելի պահուիլ Հայոց կրօնական ա-
րարողութեանց մէջ, եթէ ստուգիւ-
Զ. Դարուն զՀայս գաղթած համարինք
'ի փոռիզիոյ 'ի Հայաստան:

Զ. Անկարելի է հաւատաւորութիւն որոշել

Հայոց և փոխգաղտնի ծագումը, քանի որ յԱսիոյ և յԵւրոպիոյ 'ի փոքրն Ասիա դիմող բազմամիոս ազգաց և ժողովրդոց խորհրդաւոր հանգոյցը դեռ չէ լուծուած, որոնց թիւն մինչև 300ի կը հասցնեն հին և նոր մատենագիրքը, Անոնք ամէնքն ալ գրեթէ հնգեւրոպական ցեղեր էին և իրարու հետ ազգակցութեամբ սերտիւ կապուած, և ոչ թէ Հայք միայն։ Ամէնքն ալ աւելի կամ պակաս ելած են իրենց յատուկ խանձարութենէն և օտար աշխարհաց մէջ իրենց դերը խաղացած և նորէն իրենց որրանք վերադարձած են։

Է. Անկարելի է որ Է. դարուն վերջերը Թորգոմեան ըսուած Հայերն՝ փրոփուգիայէն անցնելով 'ի Մեծ Հայստիւրած ըլլան Ուրարդոյ (Արարտեանց) և Վաննայ թագաւորութեանց, եթէ իրաւքնէ անոնք բոլորովին այլազգ ժողովուրդներ եղած ըլլային։ Որովհետեւ մի և նոյն դարուն մարդաբանութեանց զբոսն՝ Արարատայ թագաւորութիւնը կը կոչեն 'ի վերայ Բաբելոնի՝ իբրև հզօր պետութիւն մը, որոց կը միարանին նաև Մովսէս Խորենացին և Գիւրգօր Սիկիլիացին, յիշելով յականէ յանուանէ և զՍկայորդի և զՊարոյր Հայկազունս։

Ը. Տիգրանէն քիչ առաջ, այսինքն է վեցերորդ դարուն սկիզբը, կ'աւանդեն Հայաստանի սեպաձև արձանագրութիւնք՝ թէ երբ Սարյուքին պարտասելով՝ իւր զէնքերը Մարաց վրայ դարձուց, Արարատայ թագաւորն Արգիշտիս այնուհետև միացուց բոլոր Վաննայի, Նայիրի, Մեղրիսի, Մուսասիրի, և այլն, իշխանութիւնքը. և եղաւ բացարձակ տէր և միապետ Հայոց Մեծաց և մինչև ցկոմագեն եղած երկիրներուն։

Թ. Այնուհետև ոչ միայն Վաննայի թագաւորներն բնաւ չեն յիշուիր, այլ նոյն իսկ անկէ վերջը եկող Արարատայ թագաւորներն իսկ իրենց յիշատակաբանքը Վանայ մէջ կ'արձանագրեն, իբրև իրենց թագաւորութեան մայրաքաղաք, և հոն մեծամեծ և հսկայադործ

աշխատութիւններ 'ի գործ կը դնեն։

Ժ. Պատմութեան մէջ տեսնուած չէ՝ որ վերջէն եկող զօրաւոր օտար ցեղ մը՝ իւր նախնիքաց ցեղին կամ յազգութեոյն կրօնքը, լեզուն և սովորութիւններն ընդունի, փոխանակ ընդունելի ընելու զիւրն, որով կարենայ զանոնք իւր մէջը ընկղմել. այլ ընդհակառակն վարուած են միշտ, ինչպէս Սասանեանք ընկղմեցին զԱրշակունիս, և Արաբացիք՝ զՊարսիկս, և այլն։ Այսպէս ուրեմն չէին կրնար ընել փոխգացի կարծեմով եկէն Հայոց, որոնք նոյն իսկ ըստ վկայութեան Լընորմանի, ոչ միայն սակաւաթիւ էին, այլ նոյն իսկ 'ի Թրակացուց հալածեալ ապաւինեցան 'ի Մեծն Հայաստան և աւանդ ամէն բանը ընդունեցան։

ՃԱ. Վեցերորդ դարուն Հայոց՝ փոքր Ասիայէն 'ի Մեծն Հայս ապաւինելն իսկ, եթէ ստոյգ իցէ, յայտնի ապացոյց մի է թէ այն ժողովուրդն՝ Արարատայ ժողովրդոց համացեղ և համալեզու եղբայրն էր, որ նախնիքացաբար հեռացած լինելով 'ի տար աշխարհ, բայց ապա այլասեր ժողովրդներէ նեղուելով՝ վերստին հոն դիմեց. որով ոչ ֆիզիկեան Արարտեան Հայոց լեզուն, կրօնքն և հին աւանդութիւնքն, այլ նորեկն՝ իւրեանց ազգին աւանդութիւնները անշնչելի պահեցին դարուց 'ի դարս։

ԺԲ. Եթէ Հայք փոխգացի ըլլային և իրք անտի 'ի Հայաստան գաղթած, հարկաւ ուրիշ ժողովրդոց պէս իրենք ևս պէտք էին ունեցած ըլլալ իրենց նախնիքն խանձարութիւն մէջ գործածուած պատմական դէպքեր, դիւցազուններ, վիպասանական երգեր, զրոյցներ, ժողովրդական կենդանի աւանդութիւններ, և այլն, անշատ 'ի Հայոց Արարատայ. սակայն արեւմտեան Արմենիոյ և փոխգաստանի մէջ բնակած այդ կարծեցեալ Հայոց ժամանակին՝ ենթագրեալ արարուածոց կամ աւանդութեանց և ոչ հետքը տեսնուեցաւ մինչև ցայսօր։

ԺԳ. Ընդհակառակն այն Թորգո-

մեան ժողովրդեան մէջ մինչև քրիստոնէական թուականին հինգերորդ դարը կենդանի մնացած բոլոր նախնական արարուածքն և աւանդութիւնքն Արմենիոյ հարաւային մասին հետ սերտիւ կապուած են, զոր Պ. Լընորման Ալարտեանց խանձարուրք կը համարի։ Ըստ վկայութեան Մ. Խորենացւոյ և այլոց պատմագրաց, որք աւանդեցին մեզի Հայ ժողովրդեան վիպաւաւանոչքեան և թուեցեաց երգերն, Հայկէն սկսեալ Անուշաւան, Արմենակ, Արամ, Արա Գեղեցիկ, Շամիրամ, Զարմայր, Վահագն և բոլոր հայկազունեաց հարստութեան վէպք և վիպասանութիւնք՝ հոն գործուած կաւանդեն կամ անտի դէպ յարեմուտ անցած։ Արամ՝ որուն գոյութիւնն և պատերազմներն՝ արդ Ասորեստանեայց սպառնալէ արձանագրութիւնքն ևս կը հաստատեն այսօր, ըստ հին աւանդութեան բոլոր Հայ ժողովրդեան՝ այն կողմերու և Միջագետաց, Ասորոց վերայ տրեւելն յետոյ՝ կ'ընդարձակուի դէպ յարեմուտս։ և մէկ կողմանէ Տիւրանեանց, իսկ միւս կողմէն Բելեան կամ Ասորեստանեայց հետ պատերազմներ կը մղէ։ Իսկ Զարմայր ընդ զօրուն Ասորեստանի՝ յետոյ օգնութեան կ'երթայ իւր համազգեաց ՚ի Տրոյիս։

ԺԴ. Եւբուլմիտի և Աղեքսանդր Բագմավիպի աւանդածին համեմատ, (որ է աւանդութիւն կամ յոյն ժողովրդեան և կամ արևելեան ազգաց), Հայք ոչ թէ Գրիստոսէ վեց դար առաջ ՚ի Փոնտիոյ անցան յարեմոսանն Հոյաստան, այլ արդէն 20 դար առաջ կը բնակէին ՚ի հարաւային կողմանս Հոյաստանի, և էին զօրաւորք, և փրկեցեւոց հետ պատերազմներ մղելով՝ յաթող կը հանդիսանային։

Աւրեմն թողունք այդ բաւիղն, յորում որչափ որ մէկը շարժիլ ուզէ, այնքան աւելի կը խորատուգի յանել չաւիղս, և ուրիշ ճամբայ մը բռնենք։

Պրիգք՝ ըստ Հնդկային աւանդութեան Պրիքիք, ոչ առանձին ազգ մը կամ աշխարհ մը կը նշանակէ և ոչ այլ

Հայք անտի յառաջ կու գան. այլ ընդհանուր յարեմական տոհմի անձնաշարժքիւն և դաղթականութիւն՝ մ'է, և կամ հնդեւրոպական շեղու կամ այն ժողովրդոց ամբողջութիւնը կը նշանակէ՝ ըստ մեր կարծեաց։

Եւ իրօք Հնդամատենի Նեղինակն Ժ. զխուսն երկրորդ համարին մէջ՝ յետ յիշելոյ զորդիս Բաբելի՝ անդէն կը յաւելու, թէ «ի սոցանէ մեկնեցան կողիք ազգաց յերկրի»։ Ինչպէս Թարսիս, Կիտ և Հռոյ, այսպէս նաև կըղզիք ազգաց բաւերով կը նշանակէ փոքր Ասիայէն ցնունաստան տարածուող բազմամիտի՝ բայց համարուն և համալեզու ազգաբնակչութիւնքը, որոնց ազգեցութեան՝ քաղաքական, կրօնական և լեզուական հետքերը՝ Եւրասիանեան Պոնտոսի արևելեան ծայրէն մինչև ց/իշերկրական ծով, ց/իշիլիլիս և ց/իշիլիական ծով կը հասնէին, և ՚ի յայտ կու գան այժմ՝ անոնց հետքը։ Զայս կը հաստատէ նաև Եղիպտոսացոց փոսմեղիկէս թագաւորին ըրած մէկ փորձն, իմացընելու համար թէ փոխադարձ (յարեմական ցեղի լեզուն) աւանդէն հարազատն էր, կ'ըսէ Հերոդոտոս (Բ. 2)։ Փոնտական կամ Հընդուրոպական մէկ ցեղին գաղթականութիւնն յարեմից յարեմուտս՝ Տրոյիոյ պատերազմէն շատ դարերով առաջ՝ կը հաստատեն հին և նոր աւանդութիւնք, և այն քաղաքին աղետաւոր դէպքին և ժողովրդեան հետ կապակցեալ կը տեսնենք։ Բայց անոնց զօրեղ թագաւորութիւն ձևանալն՝ Տրոյիոյ կործանմանէն վերջէն է. իսկ անոնց պատմական և յեղափոխութեան մանրամասունքն՝ բոլորովին այլաբանական քօղով ծածկուած են, և իրենց թագաւորին՝ Գորդիստի՝ հանդուցովը կ'ընդունուի։

Այսպէս ուրեմն այն անուան տակ ծածկուած հնդեւրոպական կամ արիական ցեղի հազարաւոր գաղթականներն մէկն ալ զՀայս կրնանք համարել, որոնց խանձարուրքն էր ըստ վկայութեան բանասիրաց՝ վրաստանի, Ասոր

պատականի, Թուրքաստանի, Կողքիսի
և Փորուն Ասիոյ մէջ տեղ եղած երկիրը:
Այս ցեղիս (փոխգիտաբնակ չայոց)
գաղթականութիւնը ոչ տեղափոխա-
կան է, և ոչ ալ քաղաքական և լեզուա-
կան մեծ ազդեցութիւններ ունեցեր է,
այլ լոկ առժամանակեայ աշխարհակա-
լութեամբ, գուցէ աւելի վաճառակա-
նութեամբ եղած է. և չէ մարթ ընդ-
արձակել զայն անդրազոյնս քան ըզ-
թեալիս և զլարիսսա գաւառս Յու-
նաստանի: Ասոնք ազգաւ և լեզուա-
նոյն էին Արարատայ թագաւորու-
թեան, Մուսասիրի և վաննայի ժողո-
վրդոց հետ. որոնց ամենուն լեզուն,
ցեղն և կրօնքն՝ արիական էին և հընդ-
եւրոպական ընդոյն կը վերաբերէին:
Սակայն անոնցմէ ոմանք անկախ պա-
հած էին իրենց գաւառական լեզուն
և յատուկ սովորութիւններն, և այլք
խառնուած ընդ օտարասեռ և ընդ չըր-
ջապատող տարերս:

Անկարելի է ուրեմն որ Ուրարդուոյ,
վաննայի և Մուսասիրի ժողովուրդ-
ներն, ինչպէս նաև անոնց լեզուն՝ սե-
մական եղած ըլլալին, ինչպէս անկա-
րելի է հասարակածին տակ զարգա-
ցած բուսոյ մը գոյութիւնն՝ ի սառու-
ցեալ բևեռս: Բանասիրական գիտու-
թեան մէջ գրեթէ ընդհանուր սկզբ-
բունք մ'է, թէ ինչպէս բոյսերն՝ այս-
պէս նաև ազգք և լեզուք՝ աշխարհա-
գրական զրից և կլիմայի հետ ամենա-
սերտ յարաբերութիւն ունին: Ուստի
այս ազգաբնակութեանց աշխարհա-
գրական զիւրքն՝ բոլորովին զատուած էր
և հեռի կ'իյնար սեմական ցեղերու
խանձարուրէն, որ հիւսիսէն և արև-
մուտքէն կը սահմանուէր Կորդուաց լե-
րանց, Տարուսի և Անտիտաւրոսի չըզ-
թաներով և Եփրատ և Տիգրիս գետե-
րով:

Պէտք չէ պատրիշ Հայաստանի մէջ
գտնուած Ասորեստանեայց կարծուած
քանի մի սեպագն արձանագրութիւն-
ներէն: Որովհետև նախ այն սեպագն-
ներու ընթերցումն զեռ ճշգրտած չէ, և
չի գիտցուիր թէ որ ազգին կը պատ-

կանին, և եթէ ճիշդ ևս համարելու ըլ-
լանք՝ անոնք իսկ կը հաւաստեն թէ
Արարատայ և վաննայի ժողովուրդքն՝
Բէլիդատուրի ժամանակ Ասորեստա-
նեայց միայն գրեթէ փոխ առին և ոչ
թէ լեզուն, և թէ շուտով Ասորեստա-
նէն բերուած գրութեան կերպը տե-
ղացիք իրենց լեզունով գրելու գործա-
ծեցին: Եւ իրօք Բէլիդատուրի որդւոյն
Խապուինիսի արձանագրութիւնը (Շուլ-
ցի թիւ 36) տեղացուց լեզուովն է,
ինչպէս նաև ետքը եկող բոլոր յիշա-
տակարանք, Երկրորդ՝ Հնագամատենին
Ժ. գլխուն նկարագրէն իսկ քաջ կ'ի-
մացուի թէ մինչև Կորդուաց լեռներն
և Եփրատայ հարաւային հովիտը կը
հասնէր սեմական ազգաց խանձա-
րուրքն. իսկ հիւսիսակողման և արև-
մտեան երկիրներն՝ ամէնքն ալ յարե-
թական կամ արիական ցեղերու խան-
ձարուրք էին: Երկրորդ՝ Հայաստանի և
Ասորեստանի ժողովրդական աւանդու-
թիւնքն՝ Հայկայ և Բելայ հսկայից ա-
րևահեղ պատերազմներով՝ կը ցու-
ցնեն այն երկու ազգաց տարբեր ցե-
ղի, լեզուի և կրօնից վերաբերելն,
զորս կը հաստատեն այսօր նաև սեպա-
գն արձանագրութիւնք:

Իրն այսպէս պարզելէն յետոյ և
հիմնական ամենաստույգ սկզբունքներ
ձգելէն վերջը՝ հակառակ կարծեաց Պ.
Լընորմանի, հաստատութեամբ կրնանք
ուրեմն բարձրացընել ի վերայ նոցա՝
իրեն յանգրդուելի հիման՝ Արարա-
տեան կամ Ալարոտեան թագաւորու-
թիւնը, Թորգոմայ տան կամ Արմե-
նիոյ և Հայաստանի հումացեղ և հւս-
մալեզու, բայց փոքրիկ իշխանութեանց
միապաշտոյ յօրինուածը, միաբանել
անոր մասին՝ բոլոր տոհմայնոց և օտար
ազգաց անդիր և գրաւոր աւանդու-
թիւնքն, և պարզել Հերոդոտոսի այն
խորհրդաւոր քօղը:

Արդարեւ՝ այս կարծեցեալ երեք
տարբեր աշխարհաց և ժողովրդոց՝ մի
և նոյն ցեղէ յառաջ գալն, մի և նոյն
լեզուն ունենալն և հաւանօրէն մի և
նոյն հնութիւնն՝ այնչափ յայտնի են,

որ երկարորէն և ցուցակով թեանց պէտք չունէին ըստ մեզ, եթէ բացասական դրութիւնն ոմանց՝ չստիպէր զմեզ առայն ։

Յիրուի, այն լիւնոտ երկրին մէջ զոր Հնգամատեանն Արարատ կը կոչէ Գրիստոսէ 15 դար առաջ, Բերտոսէն սկսեալ բոլոր Գաղղէացոց մատենադիրներն, այն ազգին ամենահին աւանդութիւնն և բոլոր քրիստոնէական թուականին մէջ ապրող մատենագիրներն՝ զոյգ ընդ Մովսիսի՝ տապանը կ'իջեցնեն։ Զնոյնն նաև մի և նոյն ժամանակի մէջ փորձած եգիպտական արձանագրութիւնք Ռեմէն կը կոչեն, ըսելով թէ անոր «չորեքկուսի սիւներուն վրայ կը հանդէր երկիրքն» , այսինքն է՝ կորդուաց, Տաւրոսի, Խաղտեաց և Մասիս լեռանց վրայ։ Ամովսիններորդ դարուն մէջ զայն Ռեմէն կը կոչէ, և Աստուծոյ սպառնալիքէն հոն ապախնել կու տայ Խարայելացոց, իբրև լեռներով ամրոցած երկիր։ Անկէ վերջը եկող Հրէից դրբերն՝ իբրև Հայոց կամ Արարատեան աշխարհ՝ հոն փախչել կու տան ութերորդ դարուն մէջ Սենեքերիմայ հայրասպան որդիքը։ Մի և նոյնը կիրոսի ժամանակ և Դարեհ վշտասպեայ սեպածև արձանագրութեանց մէջ Արմենա կամ Արմենիս կը կոչուի։ Մի և նոյնը կը համարի նաև արդի բանասիրաց ընդհանուր և ընդունելի կարծիքը։ Մի և նոյնը, կ'ըսեմ, որովհետև ամէնքն ալ մի և նոյն նկարագիրը կ'ընեն, և անոր աշխարհագրական դիրքն Ասորեստանեայց հիւսիսային կողմը կը գնեն. որ ըստ Հերոդոտոսի կը հասնէր մինչև ցկողքիս և ցՍաբեր։ Ռեթիներորդ դարուն երեմիս և Եգեկիէլ մարդարէք՝ մերթ Արարատեան քաղաւորոքին և մերթ տուն թորգոմայ յորջորջմամբ՝ կը կոչեն զՀայս կամ զՀայաստան. երկուքն ևս կը կոչեն զայն «ի ծագաց հիւսիսայ» , իրենց դրացի և ազգակից Մաննայի կամ Վաննոյ նախարարական գնդաւ հանդերձ՝ ի վերայ Բաբելոնի, որ անկարելի իմն լինէր՝

եթէ ըստ կարծեաց Պ. Լընորմանի Զ. դարուն ի մեծն Հայաստան եկած լինէին։ Մի և նոյն ժողովուրդներն՝ իբրև սահմանակիցք Ասորեստանի և Գիւնիկիէլ, առեւսյ և անխտիր կը կոչեն Եգեկիէլ և Հերոդոտոս, ի շահաստանս Տիւրոսի և Բաբելոնի՝ Տիգրիսի նաւարկութեամբ, որ քոքը Հայոց և Փոնիկիոյ բնակչաց չէ անկ, Հնոյն Հայաստանի այն երեք նահանգաց ժողովրդական աւանդութիւններն ալ այնպէս սերտիւ և ժամանակադրական դիպօք ի մի զանգուած են և յանուն Հայոց Մեհաց մեղի հասած՝ որ կարելի չէ անջատել ի միմեանց։

Անտեղի է այն կարծիքն՝ որ կը համարի թէ մարիբասեան երկասիրութեան մէջ բերած Հայկազունի իշխանաց աղագարանութեան առաջին մասն մինչև ցՏիգրան Ուռլին՝ Ասորեստանեայց թագաւորաց երկրորդ ցուցակին նմանութեամբ հնարած ըլլայ, զոր կ'աւանդէ Դիոդոր Սիկիլիացի։ Արդէն ապացոյցած ենք թէ խորհնացիէն յառաջ Հայկայ և անոր յաջորդաց աւանդն հանդերձ ժողովրդական զբոյցներով կային յաւանդութիւնս և յերգս վիպասանաց և յանուանս տեղեաց։ Երկրորդ՝ թէ ինչպէս Հայաստանի ամենահին սեպածև արձանագրութեանց մէջ յիշուած անուանց շատերն՝ Հայոց նախնի աւանդութեանց հետ նոյն են և զանոնք կը վերահաստատեն։ Բաց ի Հայկայ, Արմենակայ, Արամայ, Արայի, Անուշաւանայ (Սոս) ըստ ժողովրդական աւանդութեան, Պարոյրի և Տիգրանայ անուններէն, որոնք հանդերձ ժողովրդական աւանդութեամբ կը գտնուին զրոշմեալ Հայաստան աշխարհի զտնազան յիշատակարանայ վրայ՝ յանյիշատակ ժամանակաց ի վեր, մեր հնագոյն մատենագիրներն անգամ Ագաթանգեղոս, Բուզանդ, Զենոբ Գլակ և Մարարբա Մեծունեցիին՝ ոչ երբեք որիշ կը յիշատակեն զՍուրարդիս ի Հայոց և զՀայս ի Թորգոմացոց, այլ ի միասին. օրինակ իմն. « Բանդի յԱրարատեան դա-

ւառին, 'ի թագաւորանիստ կայանան՝
բոլեցին Հայոց՝ Տանն թորգումայ չը-
նորհք քարոզութեան ։

Այժմ դիւրին է և բնական՝ պար-
զել փոխադարձակ Հայոց խորհրդաւոր
քօղն ևս , և բանաւոր լուծում մը
տալ . որոյ հակառակ կողմը միայն տես-
նել ուղեցին Հերոգոտոս և Լընորման ,
երկուքն ալ լաւ հմուտ չըլլալով ազ-
գային աւանդութեանց , լեզուին և աշ-
խարհագրական անուանցն և ամե-
նայն անցից ։

Ինչպէս ըսինք՝ նախնաբար ասոնք
Հայկեան քաղթականութեան մի մա-
սը կը կազմէին , և անոնց 'ի փոքրն Ա-
սիա գաղթելուն պատմութիւնն և ժա-
մանակն՝ քաջին Արամայ պատմու-
թեան և ժամանակին հետ սերտու-
թիացած է , որոյ մասին Աստատա-
նետոյց և Հայաստանի սեպածէ արձանա-
գրութիւնք՝ լաւ կերպով կը միաբա-
նին այսօր՝ Մարիբասիան կամ Խորե-
նացոյ աւանդածին , բաց 'ի ժամանա-
կագրական տարածայնութենէ մը , որ
սեպածէ ընթերցման գաղտնիք մ'է
քան թէ իր՝ Երկուստեք կը վկայեն
թէ Արամ եղբւ Հայկազունեաց առա-
ջին թագաւորն՝ յԱրարատ գաւառին ,
և թէ Արամ իբրեւ գոռ պատերազմող՝
մեծամեծ պատերազմներ ունեցաւ սե-
մական ազգաց և արևմտեան ժողովրդ-
դոյ կամ Տիրոսանցնց դէմ ։

Հայոց պատմութիւնն կ'աւանդէ թէ
այս թագաւորն՝ յետ վճարելոյ զպատե-
րազմն ընդդէմ հարաւային ազգաց և
յետ սպանանելոյ զխառնաւոր , կը խաղայ
յարեմուտս բազմամիւ զօրքով , մեծա-
մեծ պատերազմներ և աշխարհակա-
լութիւն կ'ընէ Պոնտոսի և Միջերկրա-
կան ծովերուն մէջ եղած երկիրներու
մէջ , կը յաղթէ Պայապիսի , կը շինէ ըզ-
Մաթաթ (կեսարիա) , կը թողու հոն իւր
զօրաց մի մասը և հայազգի գաղթա-
կաններ , և հրաման կու տայ բնակչաց
աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս

հայկական ։ Ուրեմն Արամայ աշ-
խարհակալութեան ետեւէն ընթացող
շահավաճառ և զինուորական տարրն՝
'ի կեսարիա շինաց , այլ անդրազոյնս
ևս յառաջեց իւր ընթացքը , յանուն
Արամայ կամ Արմենիոսի , որ կը տը-
րուէր , ինչպէս տեսանք՝ թորգոմայ
տանը կամ բոլոր Հայոց Մեծաց , Ան-
ցաւ յԱնատոլիոյ՝ 'ի Թրակիա և 'ի Լա-
րիսսա , և անոր հետքերն անջնջելի մը-
նացին և կը տեսնուին մինչև ցայսօր ։

Արգարե Արձիսուս կամ Արձէկ՝ ո-
րուն համար կը ծանուցանէ Ստրաբոն
թէ իւր ժամանակ Արկուշուս կը կո-
չուէր՝ էր համանուն մեր հինաւուրցն
Արկուուոյ կամ Ակուուոյ . դարձեալ Ե-
րասխ (Պինէոս)՝ ըստ Յունաց , որոյ
համար կ'աւանդէին Յոյնք թէ յԱրմե-
նիոսէ ընկալլաւ իւր անունը , Պինէոսի
նմանելուն պատճառաւ , որ էր անուա-
նակից նորա , և Մետիոս և Կիրսիլոս
իսկ կը հաստատեն՝ թէ Պինէոս՝ եր-
բեմն Երասխ կը կոչուէր . այսպէս նաև
Որմենիոսու կամ Արմենիոսու քաղաք
մը , զոր յիշէ Ստրաբոն , և Յունաց միւս
աւանդութիւնք՝ անժխտելի կը հաստա-
տեն՝ թէ Իրաւոյնէ Հայոց Մեծաց կամ
Արմենիոյ Արճէշ լճին և քաղաքին , և
Բղնունեաց ծովակին և Երասխ գետին
եզերքը բնակող ժողովուրդն՝ այս ա-
րևմտեան գաւառաց մէջ ևս ոտը կու
խած էր յերբեմն ժամանակի , գուցէ
այն ժամանակի երբ Յունաստան գեռ
իւր Սոգունն ունեցած չէր ։

Չէ և չէ մարտը բռն թէ վեցերորդ
դարուն Հայք՝ Յունաստանէն բերին
նաև այն անուանքը և Հայաստանի աշ-
խարհագրական դրիցը վրայ սեփակա-
նեցին . Այս անուանքն՝ ինչպէս տե-
սանք՝ նոյն իսկ սեպածէ արձանագրու-
թեանց մէջ կը՝ յիշուին , որոց գոյու-
թիւնն վեցերորդ դարէն շատ յառաջ
է , որոյ կը վկայեն նաև բանասիրաց մե-
ծագոյն մասն . Ուրեմն այսու իսկ Լը-
նորմանի և Հերոգոտոսի կարծեաց ան-

1 Խորենացին իմաստութեամբ կ'ըսէ զյեզոս
և ոչ զգիր , վասն զի նոյն ժամանակ Հայք կամ
Ուրարտիք գեռ գիր չուէին , իսկ զյեզոս ը-

սելով՝ կ'իմանայ անշուշտ Հայաստանի գաւա-
զան գաւառական յեղուները , զորս մէք 'ի վեր
անգր յիշեցինք ։

հաստատութիւնն և սխալ լինելն կը տեսնուի:

Արարատ նահանգի հայկազունի ժողովրդեան այդ մասն, որ իւր խանձարութենն ենելով՝ տարածեցաւ 'ի թրաւ կիւս և 'ի թեւալիս, չկրցաւ իւր ազգեցելութիւնը պահել միշտ այն այլատարր ժողովրդոց վրայ, յորս կը զբոսուէր. այլ ընդ հակառակն՝ իւրն սկըսաւ կրել անոնց հզօր ազդեցութիւնը: Ընդունեցաւ կամաց կամաց փոխառացւոյ սովորութիւնքն և նոցա զգեստուց տարազները. իրեն իւրացոյց անոնց դրութեան եղանակն և կրօնական դիրքը. սակայն պահեց նոյնպէս իրենազգին և աշխարհին սովորութեանց և աւանդութեանց մաս մը: Միով բանի՝ այնպիսի մեծ փոփոխութիւն կը բերցին և այնպէս կ'երևին փոխգիացւոյ մէջ, ինչպէս կ'երևին այսօր Տօնի, Տնեքերի և Վոլկայի ափանջը վրայ բնակող խաղախներն՝ Ռուսաց մէջ: Ուստի Հերոդոտոսի ժամանակ հազիւ թէ կարենային զանազանութիւն կամ փոքուն Ասիոյ՝ 'ի փոխգացւոյ, կամ իրենց նախկին հայրենեաց գաւառական մէկ բարբառովը և կամ իրենց կրօնական և քաղաքային աւանդութեամբը:

Այսպիսի պարագայից մէջ գտնելով զանոնք Հերոդոտոս և ուրիշ յոյն մատենագիրք՝ զարմանք չէ որ զՀայս փոխառացի համարէին. մանաւանդ քան ի որ մէկ կողմէն այն ժողովրդեան անյիշատակ ժամանակի գաղթականութեան պատմութիւնն և անունն՝ գիր չըլլալուն պատճառաւ՝ փոքր Ասիոյ հարկւրաւոր գաղթականաց խառնակութեան և խորին մոռացութեան մէջ թաղուած էր. իսկ միւս կողմէն՝ Յունաց ազգային աւանդութիւնը, որ ըզբոյնս յերկնից և յաստուածոց իյած կը համարէր և կամ յերկրէ բուսած, նոյնը Հայ ցեղին աւանդութիւններն ևս յեղաշրջած էր գոռողութեամբ, և իւր այդ սին պարծանաց 'ի նպատակ գործածած:

Դարական միջոցներ անցնելէն յետոյ, երբ Բոյնք և փոքուն Ասիոյ փա-

րիկ ազգութիւնքն զօրացան, և թրակացիք մանաւանդ կը սպառնային կլանել զՀայս, այն ժամանակ կ'երևի թէ Հայք թողլով զփոքր Ասիա՝ ապաւինեցան առ հարազատ ելլալու իւրենց Հայոց Մեծայ, եթէ ստոյգ համարինք Պ. Լընորմանի երեսկայեալ այնպիսի բազմութիւն գաղթականութիւնը, որոյ մասին ոչ աւանդութիւն և ոչ ալ պատմական հաւաստիք կ'երևին: Այս պատճառաւ մեղք աւելի հաւանական կը համարինք՝ թէ այնպիսի բազմութիւն և արշաւադիր գաղթականութիւն մը դէպ 'ի Հայաստան՝ և ոչ իսկ տեղի ունեցած՝ ըլլալ, այլ փոքուն Ասիոյ մէջ տարրացած՝ անդ խաղացեր է այնուհետեւ իւր դերը:

Երբ Պարսկական տիրապետութիւնն չորս և կէս դար նախ քան զԲրիտանոս հասաւ մինչև այն երկիրները, այն կողմի Հայերն եղան պարսիկ զօրաց քաջ աղեղնաձիգ գունդերն, մինչև ցարսահ իորդոմանոս, փոքուն Ասիոյ Հայոց ձեռքով զօրացաւ հայկազունի կուսակալն Ջարհհ (Ջարիսարիս), և տիրեց բոլոր փոքուն Հայոց և անոր սահմանակից երկիրներուն: Արշակունեաց թագաւորութիւնն կանգնեցուն պէս՝ նոյն ժողովուրդն մեծամեծ դեր խաղաց Վաղարշակայ, Արտաշիսի և Մեծին Տիգրանայ և Միհրդատայ պատերազմաց մէջ: Նոյն Հայերն կային յաշորդաբար 'ի թրակիս՝ նոյն իսկ մեր թուականին չորրորդ և հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ դարերուն մէջ. որոնք արեւմտեան և փիւզանդական կայսերութեանց բազմութիւ թագաւորներ, զօրավարներ և քաջամարտիկ գունդեր հանեցին, Աւարաց, Հոնաց, Գոթաց և ուրիշ բարբարոսաց արշաւանաց դէմ: Այն Հայերն աւուրի կորեանց նման՝ որջացած կը մնային մինչև ցծիլ դար՝ Տաւրոսի և Անտիտաւրոսի լեռանց մէջ. և երբ տեսան զգալուստ համազգեաց իւրեանց՝ Օյնի և Ռուբենի՝ ասպարէզ ելան, և հարածելով զԲոյնս՝ հաստատեցին անդ զթագաւորութիւնն Ռուբինեանց:

Այսպէս ուրեմն յետ այնչափ ակնյայտին վկայութեանց՝ հուսկ 'ի վախճանի ընդ հաւատարմագունին 'ի բանս Ղազարայ փարպեցոյ՝ պէտք ենք ըսել, թէ « Արարատն էր գլուխ (բովանդակ Արմենիոյ) աշխարհիս Հայոց և միջոց »:

Եւ ինչպէս Հայք՝ այսպէս ալ անոնց մասնաւոր երկիրն Արարատ՝ ոչ միայն իրեն բնական զրից համար, այլ նաև բարօրական և քաղաքական ազդեցութեամբ՝ էր ազնուական ժողովուրդ թորգումացւոց կամ Արմենական ցեղերու մէջ, վասն զի ըստ պատմութեան

հոն եղաւ միշտ աթոռն և կայսն մեր թագաւորներուն . ամէն նշանաւոր գէպք մեր ազգային պատմութեան՝ զԱրարատ կը յիշեցնեն: Հոն անաւ հայկական այն զուտ բարբառն՝ առանց կորանցընելու բնաւ իւր առանձնաշնորհութիւնն՝ յընթացս բազմահոլով դարուց, որպէս յիտոյ 'ի ժամանակս Արշակունի թագաւորաց մերոյ՝ եղաւ արքունական և դպրութեան լեզու: Միով բանիւ՝ հոն սկսաւ և անկէ տարածուեցաւ քրիստոնէութիւնն և անոր հետ 'ի միասին հայ դպրութեան և քաղաքականութեան ոսկեդարն:

Կը շարունակուի:

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՅԷ» ԲԱՌԻՆ

Ար և իցէ բառի այս և կամ այն ինչ եղանակաւ գրուիլն կը ստուգուի նախնաց ընտիր ձեռագրաց միօրինակ անփոփոխ գրութեանն, և կամ եթէ բառն բաղադրեալ լինի՝ զայն կազմող մասանց ուղղագրութեանն: Ուզելով գիտողութիւն մ'ընել ամեն բառին ուղղագրութեան նկատմամբ, կը յիշեցնեմք ընթերցողաց՝ որ երկար ժամանակէ 'ի վեր ազգային հրատարակութեանց մէջ, եթէ լինին օրագիրք կամ ուսումնաթերթք և եթէ մասնական մատենք, անմիաբանութիւն կը տեսնուի սոյն բառին գրութեան մէջ, ոմանց զբողմելով զայն Ե տառիւ, իսկ այլոց վերագասելով Է տառիւ գրութիւնն, և սակաւուց ևս՝ իբրև հաշտութարք երկուց կողմանցն, մի և նոյն հասուածի մամ մատենի մէջ անխտիր մերթ Ե և մերթ Է տառիւ գրելով: Այս զանազան գրութեանց օրինակ բերելն հոս՝ աւելորդ կը համարեմք, այլ կը յայտնեմք որ գիտողութիւնն իստպարական վրիպակաց ցուցակէն դուրս է: Բայց բնաւ զարմանք չի պատճառեր մեզ այս զանազանութիւնն ներկայ ժամանակին մատենագրաց մէջ, մինչդեռ քնոյն տարաձայնութիւնն կը տեսնեմք նաև յնտիք ձեռագիրս նոյն նեաց. որով և այժմ չեմք կարող պարտաւորել զգրիչս՝ այսու և կամ այնու կերպիւ միայն 'ի կիրածելու զայն, իբրև անփոփոխելի աւանդեալ օրէնք մի 'ի նախնեաց գրութեանն. բայց և ոչ ոք կ'արգելու մեզ անյուշ՝ քննելու. նոյն բառին կազմութիւնն, (եթէ չհամարեմք զայն արմատական բառ լինել), և ընտրելագոյն դա-

տելու այս ինչ գրութեան կերպն քան զմիւսն: Ընդհանրապէս կը կարծուի որ ամէն կամ ամէն կրճատումն լինի ամենայն ձևին, ուստի և վերջնոյս Ե տառն անփոփոխ պահելի նաև 'ի համառոտութեանն՝ գրելով ամեն, այսու որոշելու համար միանգամայն յայլազգի ամէն (եւ յիցի) հնչմանն: — Թէպէտ և ստուգապէս ամենն՝ ամենայնի կրճատումն համարիմք, կամ լաւ ևս՝ ամենայնն՝ ամենի ածանցումն, սակայն կը մնայ դարձեալ քննելի՝ թէ արդեօք ամէն կամ ամենայնն ինչ մասերէ բաղկացեալ են, ուստի ինչ է անոնց սկզբնական ձևն: Տարաւոյս չկայ՝ որ հաւնայն, ամէն և ամենայն՝ նշանակութեամբ բնաւ տարբերութիւն չունին իւրաքանչիւր և, թէ մի և նոյն բառին գրութեան գաւնազան տարազներ են, որոց կազմութեան մասին այլ և այլ կարծիք յայտնուած են 'ի քերականագիրաց. յորոց ոմանք համարեցան որ ամենայն՝ ծագած է ամէն արմատէն, ածանցմամբ այն մասնրկին, որ կ'երեկ նաև ուրիշ քանի մի բառերու վրայ, զոր օրինակ՝ մի-այն, առժամ-այն, հաւմ-այն, վաղորդ-այն, գիշեր-այն, եղնիկ-այն, և այլն, և թէ ըստ օրինաց բառակազմութեան՝ կարճագոյն կարող է արմատ համարուիլ երկարագոյնին, և ոչ թէ ընդհակառակն: Այլք յենիով դարձեալ բառակազմութեան օրինաց վրայ, և ոչ դնելով բազմաթիւ բառերու մէջ ձայնաւորաց փոփոխմանցն, հաւանական համարեցան ածանցեալ հաւնայն բառին այ երկարաբառին՝ Է ձայնի փոփոխումն. որով գրեցին հաւնայն, հաւմն, աւմն. (և տառին բառերու սկիզբն զանաւիլն կամ չգտնուիլն մեծ կարեւորութիւն չունի, որոյ անթիւ չեն օրինակք, ինչպէս հօր-գոր,